

ԱՅՍ ԹԻՒՈՎ

Սիսի Կաթողիկոսարանի Պահանջքով Հայ Դատը Կը Մտնէ Իրաւական Մարզ, էջ 6
Դաշնակցութեան Առաջադրանքը, Դաշնակցութեան Խոստումը, էջ 8
«Դիտորդների Ցայտարարութիւնները Ապտակ Են Ատրպէճանին», «ԱՊԱՌԱԺ»Ի ՀԱՐՑԱԶՐՈՅՑԸ ՀՅԴ ՀԱՅ ԴԱՏԻ ԵԻՐՈՊԱՅԻ ՅԱՆԶՆԱԽՄԲԻ ՆԱԽԱԳԱՀ ԳԱՍՊԱՐ ԿԱՐԱՊԵՏԵԱՆԻ ՀԵՏ, էջ 8
Զարեհ Ա. Կաթողիկոս 1915-1963, էջ 10
Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Սիսէ Անթիքիսա Փոխադրութիւնը, էջ 11

Արցախի Պաշտպանութեան բանակը Կը ձախողեցնէ ատրպէճանական լայնածաւալ յարձակման փորձ մը



Լուրը կարդալ էջ 5: Լուսանկարին մէջ Արցախի Պաշտպանութեան բանակի զինուորներ: Նկարը՝ Արմէն Երամիշեանի:

Նախարար Մելանի Ժոլի այցելեց Մոնթրէալի ՀՕՄ-ի «Սօսէ» մասնաճիւղի գրասենեակ

Փետրուար 27-ին, Գանատայի ժողովրդական նախարար Մելանի Ժոլի այցելեց Մոնթրէալի ՀՕՄ-ի «Սօսէ» մասնաճիւղի գրասենեակ: Հանդիպման ընթացքին նախարար Ժոլի գնահատեց ՀՕՄ-ի բարեսիրական առաքելութիւնը եւ յայտնեց, որ նախարարութիւնը միշտ պատրաստ է աջակցելու Գանատայի տարածքին գործող բոլոր բարեսիրական կազմակերպութիւններուն:

Հանդիպման աւարտին, նախարար Ժոլի ՀՕՄ-ի «Սօսէ» մասնաճիւղի ատենապետ Լիւսի Շահինեանին յանձնեց Գանատայի զաշնակցային կառավարութեան կողմէ նպաստ մը: Հանդիպման կը մասնակցէին նաեւ ՀՕՄ-ի «Սօսէ» մասնաճիւղի վարչութեան անդամ Նայիրի Ֆուլենտեան եւ ՀՕՄ-ի «Սօսէ» մասնաճիւղի ընկերային ծառայութեան գրասենեակի պատասխանատու Անահիտ Տէր խաչատուրեան:



2017
HR-V
STARTING FROM
\$20,950*



*Conditions apply. Taxes not included. Freight and air taxes not included. Limited time offer applicable on selected models only and subject to change or cancellation without notice. For more information, visit Honda Gabriel.

**HONDA
GABRIEL**

7000, boulevard Henri-Bourassa E.
Montréal-Nord, QC H1G 6C4
514 327-7777
www.hondagabriel.com
◀ OPEN SATURDAYS ▶

Kevork Asadourian
Vahan Vartanian


HONDA



2173 Ste-Catherine O,
Montréal, QC H3H 1M9
(514) 933-4747

2425 boul. Curé-Labelle,
Laval, QC H7T 1R3
(450) 978-2333

8880 boul. Leduc,
Brossard, QC J4Y 0G4
(450) 656-9595

7250 Boul. Des Roseraies,
Anjou, QC H1M 2T5
(514) 493-6667

2001 Sauvé O,
Montréal, QC H4N 3L6
(514) 382-8606

4601 boul. Des Sources,
Roxboro, QC H8Y 3C5
(514) 685-5050

3100 boul. Thimens,
Montréal, QC H4R 0C9
(514) 904-6789

2655 ave. des Aristocrates,
Laval, QC H7E 0H3
(450) 665-8801

225 Rue Peel
Montréal, QC H3C2G6
(514) 905-6499

1240 Ave Eglinton O,
Mississauga, ON L5V 1N3
(905) 363-0707

20 Ashtonbee Road
Scarborough, ON M1L 4R5
(416) 642-1515

www.groupeadonis.ca

Suivez-nous !





ANI BAKERY

ԱՆԻ ՓՈՒԱՊԱՆ

Middle Eastern Pizza Lahmajoun

Սեփականատեր՝ Արսեն Տապալաղեան

Ուր կը գտնէք հայկական եւ արաբական լահ-
մաճունի տեսակներ՝ փոքր եւ բնական չափերով:
Լահմաճունը կը պատրաստենք մեր չափերով
եւ յաճախորդներուն պահանջքին համաձայն՝,
միսը իրենցմէ կամ մեզմէ: Կը պատրաստենք
եւ կը ծախենք նաեւ թահինով հաց: Միշտ
պատրաստ ենք ձեր ապսպրանքներուն
գոհացում տալու ուրախ եւ տխուր առիթներով

**Փորձեցէք եւ
գոհ պիտի մնաք**



NEW ADDRESS FROM JANUARY 2016


Ani Bakery Ltd 25 Howden Road, Unit #2
Scarborough, Ontario M1R 3C3 | Phone: (416) 285-7164

Բաց ենք շաբաթը վեց օր, Կիրակի մինչեւ կեսօրէ ետք՝ ժամը 2:00
(Երկուշաբթի փակ)

ՀՈՐԻԶՈՆ ՀԱՅԱՍՏԱՆԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ 2017

Միացե՛ք «Հորիզոն»ի Հայաստան-Արցախ շրջապտոյտին, որպէսզի Սեպտեմբեր 2-ին Ստեփանակերտի մէջ, Արցախի մեր քոյրերուն եւ եղբայրներուն հետ միասին տօնենք Արցախի անկախութեան տարեդարձը

Մանրամասնութիւնները կարդալ ծանուցումներու ներդիրին մէջ



HAIG AFARIAN

Cell : 514.862-6779
Bur : 514.360.3000 ext 1234
haig.afarian@gmail.com

effectuée par
MALES ARCHITECTES-HYPOTHÉCAIRES

Charisma
FINANCE

3310 100e Avenue, bureau 350, Laval
Québec H7T 0J7 • FAX: 514.313.5718

Groupe Sutton - Performer Inc.
123 Place Frontenac
Pointe-Claire, QC H9R 4Z7

ALBERT ARKILANIAN
Courtier immobilier résidentiel
Residential Real Estate Broker

aarkilanian@sutton.com

Cell: 514.962.8822
Bur: 514.426.9595
Fax: 514.426.9596

NISSAN | **VÉHICULES D'OCCASION CERTIFIÉS** | **HONDA**

GABRIEL

Kevork Asadourian
Directeur des ventes - usagé
Sales Manager - Pre-Owned
kasadourian@gabriel.ca

7000, Henri-Bourassa E., Anjou (OC), H1G 6C4
Tél : 514 327-7777, Cell: 514 318-4115, Téléc. : 514 327-7967
www.nissangabriel.com • www.hondagabriel.com

École De Conduite
AZIG Driving School

Tel: 514-336-1110

Moniteur-Instructeur
AUTOECOLEAZIG@HOTMAIL.COM
1400, rue Sauvé O, Montréal, QC H4N 1C5, Suite 1438 Centre Adonis II

Personal & Corporate Tax Returns
Financial Statements
Bookkeeping
Business Plan

NATALIE SKAFF, CPA, CGA
Comptable Professionnelle Agréée | Chartered Professional Accountant

nat.skaiff@gmail.com
Tel: (514) 963 3363
2866 Rue De Chamonix
Saint-Laurent, Québec
H4R 3B7

Services available
in Armenian, Arabic,
English and French

BRING YOUR OWN WINE

NAZARETH
CLASSIC GRILL

550 Curé Labelle, suite 17, Ste-Rose, QC H7L 4V6
Tel: 450.937.4064
Email: resto.nazareth@hotmail.com

SAMUEL TOPALIAN
450 682-1644

AUTO SAMSON

MÉCANIQUE GÉNÉRALE - REMORQUAGE
SERVICE DE PNEUS MISE AU POINT

4700 BOUL. SAMSON, CHOMEDEY LAVAL, QC.

RE/MAX

ՀԱՅ ԳԱՐՈՒՆԻԱՆ
Hayk Hartounian
Courtier immobilier résidentiel
Residential Real Estate Broker

C 514.574.6162
B 514.333.3000

NETTOYEUR
MARIE-CLAIRE

CUEILLETTE ET LIVRAISON GRATUITE
À DOMICILE ET AU BUREAU (MONTREAL ET LAVAL)

2535 de Salaberry, Montréal
Tél: 514.334.7830

VIP Rooms with web camera
Open 24/7

BEVERLY HILLS DOGGIE HOTEL

Pick up & drop off • Grooming
Daycare • Long-term

1396 Don Mills Rd. Unit 31 Toronto ON M3B 0A7
416.510.2434
www.beverlyhillsdoggiehotel.com

Gary Chahinian
ABR., Broker of Record - Owner
RE/MAX DIAMOND Realty Inc.
W torontohomes.ca
E gary@remaxdiamond.com

416-258-8892

Noor Fine Food™
Gourmet Mediterranean Cuisine

1 High Meadow Place, Unit 9
Toronto, Ontario M9L 2Z5
Tel 416 745 3111
Fax 416 745 9337

RIGHT AT HOME

Ani Imastounian
Sales Representative
Direct: 647-403-4046
anirighthome@gmail.com
www.imastounian.com

Two Moreau Shepell Centre
895 Don Mills Rd., Suite 112
Toronto, ON M3C 1W3
Office: 416-391-3232
Fax: 416-391-0319

Member of the Toronto Real Estate Board

I Appreciate Your Referrals! Thank You

Sutton

Sutton Group-Admiral Realty Inc., Brokerage
1206 Centre Street, Thornhill, Ontario L4J 3M0

Annie Varbedian
Sales Representative

Direct: (416) 918-3615
Office: (416) 739-7200
Fax: (416) 739-9367
annievarbed@hotmial.com
www.suttongroupadmiral.com

hearing aid source

Andre Ayvazyan HIS B.A.S

andre@HearingAidSource.ca
416 754 4327 (HEAR)

Parkway Mall, 85 Ellesmere Rd., #65, Toronto, ON, M1R 4B9

Crown Pastries
Fine Middle Eastern Pastries

2086 Lawrence Ave East (Lawrence & Warden)
Toronto ON, M1R 2Z5
Tel 647.351.2015
crownpastries@hotmail.com
www.crownpastriesbaklava.com

I.D.A.
Part of the **Rx** family of pharmacies.

Pharmacists
Sarkis Balian
Vartan Balian
Maral Abdalian Balian

Cassandra Pharmacy Inc.

2040 Victoria Park Ave.
Toronto, Ontario
M1R 1V2

Tel. : **416.449.2040**
Fax: **416.449.2048**

ANI BAKERY
ԱՆԻ ՓՈԱԴԱՆ

Middle Eastern Pizza
Lahmajoun

ARSEN DABBAGHIAN

25 Howden Road, Unit #2
Scarborough, Ontario M1R 3C8
Tel: 416.285.7164

Միսի Կաթողիկոսարանի Պահանջքով Հայ Դատը Կը Մտնէ Իրաւական Մարզ

Թուրքիոյ դէմ Միսի պատմական կաթողիկոսարանի վերադարձի պահանջ–
 ֆով, Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան բացած դատին մասին անցնող
 երեք տարիներու ընթացքին, զանազան առիթներով թէ՛ վեհափառ հայրապետը, եւ
 թէ կաթողիկոսարանի տեղեկատուութեան գրասենեակը որոշ տեղեկութիւններ
 փոխանցեցին մեր ժողովուրդի գաւակներուն։ Հիմա, որ 6 դեկտեմբեր 2016–ին
 թղթածրարը Եւրոպայի Մարդկային իրաւանց դատարանը յանձնուած է, Արամ Ա.
 կաթողիկոսին բխադրանքով դատի թղթածրարի պատրաստութեան յանձնախում–
 բի անդամներէն դուկտ. Նորա Պայրազտարեան–Գապաֆեան հետեւեալ հարցազ–
 րոյցը տուաւ կաթողիկոսարանի «Հասկ» պաշտօնաթերթին, աներաժեշտ տեղե–
 կութիւնները ու լուսարանութիւնները համապարփակ կերպով ներկայացնելու մեր
 ժողովուրդին։ Դուկտ. Պայրազտարեան–Գապաֆեան միջազգային օրէնքի դասախօս
 է Լիբանանեան համալսարանին մէջ։

ՀԱՐՑՈՒՄ.– Պատմաիրաւական ի՞նչ տուե–
 կայներու հիման վրայ պատրաստուեցաւ թղթած–
 րարը ։

ՆՈՐԱ ՊԱՅՐԱԳՏԱՐԵԱՆ–ԳԱ–
 ՊԱՔԵԱՆ.– Դատական թղթածրարը
 կ’ընդգրկէր.– Ա) պատմական թղթածրար
 մը, պատրաստուած թուրք պատմագէտ
 Մակար Էլցինի կողմէ, որ կը միտէր
 փաստել կաթողիկոսութեան սեփականա–
 տիրութիւնը, պատմական անցեալի վա–
 ւերադրական տուեալներու գիտական
 ներկայացումով (յայտնենք, որ կաթողի–
 կոսարանը չունի Միսի կաթողիկոսարանի
 կալուածագիրը)։ Բ) իրաւական թղթած–
 րարը՝ պատրաստուած յանձնախումբի
 փաստաբաններուն կողմէ։ Սոյն թղթած–
 րարի հիմնաւորումները կարելի է խտաց–
 նել հետեւեալ կէտերուն մէջ.– 1) Միսի
 կաթողիկոսութիւնը կաթողիկոսական
 նստավայր էր ու մեծ նշանակութիւն ու–
 նէր Կիլիկիոյ հայութեան համար։ 2)
 1915–էն ի վեր հայերը ցեղասպանուե–
 թեան իբրեւ հետեւանք հեռացուած են
 իրենց կալուածներէն։ 3) Կիլիկիոյ կաթո–
 ղիկոսութիւնը օրինական իրաւատէջն է
 այդ կալուածին։ 4) «Լքեալ կալուած»–
 ներու օրէնքները, զորս թուրքերը հնա–
 րած են անհատական կալուածներու
 բռնադրաւումը օրինականացնելու հա–
 մար, գործադրելի չեն կաթողիկոսութեան
 պարագային։ 5) Կալուածներու օրինա–
 կանացման թրքական օրէնքները կը հա–
 կադրուին միջազգային օրէնքի
 սկզբունքներուն։ 6) Լոզանի դաշնագիրի
 37–էն 44–րդ յօդուածներու առաջադ–
 րանքները գերադաս են կալուածներու
 գծով Թուրքիոյ պետութեան հաստատած
 ներքին օրէնքներէն։ Վերոնշեալ օրէնք–
 ներու հիմամբ, յանձնախումբը եզրակա–
 ցուց, որ կաթողիկոսութիւնը իրաւունք
 ունի այդ հողատարածքը օգտագործելու,
 ինչպէս նաեւ՝ պահանջելու անոր վերա–
 դարձը։

Հ.– Ի՞նչ կը պահանջէ կաթողիկո–
 սարանը՝ Միսի կաթողիկոսարանի վերա–
 դարձ, թէ՞ նիւթական հատուցում։

Ն. Պ. Գ.– Կիլիկիոյ կաթողիկոսուե–
 թեան բացած դատին մէջ մեր պահանջը
 յստակ է՝ վերադարձնել Միսի կաթողիկո–
 սարանի կալուածը իր իրաւական սեփա–
 կանատիրոջ՝ Կիլիկիոյ կաթողիկոսուե–
 թեան։ Այլ խօսքով, թէ Թուրքիոյ Սահ–
 մանադրական դատարանին, եւ թէ Եւ–
 րոպայի Մարդկային իրաւանց դատա–
 րանին մէջ մեր բացած դատը հիմնուած
 է կալուածի սեփականութեան իրաւուն–
 քին վրայ։ Դատի պատրաստութեան ըն–
 թացքին ոչ մէկ կերպով արծարծուած
 կամ քննարկուած է նիւթական հատուց–
 ման խնդիրը։ Յանձնախումբը կը հա–
 ւատայ, որ Միսի կաթողիկոսարանի վե–
 րադարձի պահանջքի դատը առաջին
 օդակն է մեր բոլոր եկեղեցիներու եւ եկե–
 ղեցական կալուածներու վերադարձի
 պահանջքին։ Միսի կաթողիկոսարանի
 վերադարձի պահանջքին գծով առնուած
 դատական քայլով, առաջին անգամն է
 որ Հայ դատը միջազգային օրէնքի իրա–
 ւական չրջագիծին մէջ մուտք կը գործէ
 եւ, հետեւաբար, ինչպէս նշեցինք, ան

կարեւոր դարձակէտ մը կը հանդիսանայ
 100–ամեայ մեր պայքարին մէջ։ Ինչպէս
 կ’ըսէ Արամ Ա. վեհափառը. «Այս դատը
 սովորական դատ չէ. ան կը պահանջէ
 մեր ժողովուրդին համար մեծ նշանակուե–
 թիւն ունեցող Միսի պատմական կաթո–
 ղիկոսարանի հողատարածքին վերադար–
 ձը, որպէս առաջին հանգրուան մեր եկե–
 ղեցապատկան ու ազգապատկան կալ–
 ուածներու վերադարձի մեր պահանջին»։
 Արդ, դարձեալ ինչպէս կ’ըսէ վեհափա–
 ռը. «Այս հայեցակէտով հարկ է դիտել
 այս դատը եւ չեշտել անոր իւրայատուկ
 կարեւորութիւնը մեր պահանջատիրուե–
 թեան ծիրին մէջ»։

Հ.– Ինչո՞ւ որոշուեցաւ դիմել
 ուղղակի Թուրքիոյ Սահմանադրա–
 կան դատարան։

Ն. Պ. Գ.– Մեր առջեւ կը գտնուէին
 օրինական երեք ուղիներ.– 1) Թուրքիոյ
 ներքին դատարաններ. 2) Թուրքիոյ
 Սահմանադրական դատարան. 3) Եւրո–
 պայի Մարդկային իրաւանց դատարան։
 Առաջին հնարաւորութիւնը կրնար մո–
 ղացութեան տալ դատը՝ երկար տարիներ
 անպատասխան ձգելով։ Երրորդ հնարա–
 ւորութիւնը կրնար բախիլ Թուրքիոյ
 ներքին դատարաններու իրաւական ըն–
 թացքը ամբողջացուցած չլլալու Եւրո–
 պական դատարանի օրէնքին։ Հետեւա–
 բար, յանձնախումբը որոշեց ուղղակիօ–
 ըէն դիմել Թուրքիոյ Սահմանադրական
 դատարան, պարզելով, բնականաբար
 տրամաբանական հիմնաւորումներով,
 այն բոլոր արգելքները, որոնք գինք
 մղած են շրջանցելու Թուրքիոյ ներքին
 դատարանները։ Սահմանադրական դա–
 տարանին կողմէ մերժողական որեւէ պա–
 տասխանի պարագային, յանձնախումբը
 պատրաստ պիտի ըլլար դատական
 թղթածրարը, որոչ բարեփոխումներով ու
 վեց ամսուան օրէնքով ճշդուած ժամա–
 նակամիջոցին, ներկայացնելու Եւրոպա–
 յի Մարդկային իրաւանց դատարան։
 Այս հանգրուաններն ու կարեւրութիւն–
 ները նկատի ունենալով պատրաստուած
 էր դատական թղթածրարը։

Հ.– Ի՞նչ պատճառներով դա–
 տարանը մերժեց դատի քննարկուե–
 մը։

Ն. Պ. Գ.– Նախ յիշեմ, թէ Թուրքիոյ
 Սահմանադրական դատարանը, որ
 սկզբունքով վեց ամսուան ժամանակա–
 միջոցին պէտք էր պատասխանէր դա–
 տական հայցերու, ներկայացման թուա–
 կանէն ութ ամիս ետք, տակաւին լուռ կը
 մնար մեր դատին գծով։ Ուստի, մեր
 թուրք փաստաբանը Թուրքիոյ Սահմա–
 նադրութեան 68–րդ յօդուածի հիման
 վրայ, պահանջ ներկայացուց դատի
 արագացման համար։ Նկատի առած դա–
 տի իրաւաքաղաքական կարեւորութիւնը
 ու անոր զգալուն բնոյթը, Թուրքիոյ
 Սահմանադրական դատարանը կը խնդրէ
 արդարութեան նախարարութիւնը
 կը թեկադրէ Սահմանադրական դատա–
 րանին չքննարկել այս հարցը՝ շեշտելով,
 որ ան Թուրքիոյ Սահմանադրական դա–



տարանի իրաւասութեան սահմաններէն
 դուրս կ’իյնայ։

Սահմանադրական դատարանը 15
 յունիս 2016–ին արձակեց իր վճիռը,
 մերժելով դատի քննարկումը եւ յայտնե–
 լով, որ դատը պէտք է ուղարկել թրքա–
 կան ներքին դատարաններ։

Այստեղ կ’արժէ կարեւորութեամբ
 նշել, թէ դատարանին մերժումը ըստ
 էութեան չէր, այլ՝ ըստ ձեւի, եւ այս մէ–
 կը կը պարտինք մեր փաստաբաններուն
 կողմէ հարցի մանրագնին ուսումնասի–
 рութեան ու պատշաճ բանաձեւման։ Իսկ
 մերժումի գծով տրուած պատճառաբա–
 նութիւնները (19 չլքրու վրայ տարած–
 ուած), իրաւական մօտեցումով անհիմն
 էին։ Խորքին մէջ Թուրքիոյ Սահմանադ–
 րական դատարանը ի մտի ունէր երկու
 կէտ.– ա) Մեր դիմաց փակել Եւրոպայի
 Մարդկային իրաւանց դատարանի
 դռները, եւ բ) Դատը ուղարկել թրքական
 ներքին դատարաններ։ Երկու պարագա–
 ներուն ալ իր նպատակը հարցը քննար–
 կումէ հեռու պահել էր ու մոռացութեան
 դատապարտել։

Հ.– Թուրքիոյ Սահմանադրա–
 կան դատարանին ուղղուած
 թղթածրարը եւ Եւրոպայի Մարդ–
 կային իրաւանց դատարանի
 թղթածրարները նոյն հիմնաւո–
 րումներն ու մօտեցումները ունի՞ն։

Ն. Պ. Գ.– Վեհափառ հայրապետին
 թեկադրութեամբ յանձնախումբը անմի–
 ջապէս ժողով մը գումարեց ժընեւի մէջ։
 Երկար խորհրդակցութիւններէ ետք
 որոշուեցաւ Դատը փոխանցել Եւրոպայի
 Մարդկային իրաւանց դատարան։ Ինչ–
 պէս օրին յայտնած էինք, այս գործըն–
 թացի սկիզբէն մեր հիմնական նպատակն
 էր դատը ներկայացնել Եւրոպայի
 Մարդկային իրաւանց դատարան, որով–
 հետեւ թրքական դատարաններէն դրա–
 կան մօտեցում չէինք սպասեր։ Հետեւա–
 բար, մեր դատական տուեալները ու
 իրաւական մօտեցումները այնպէս բա–

նաձեւուած էին, որ համընկնէին Եւրո–
 պական դատարանին մօտ կատարուելիք
 մեր հայցին հետ։ Այսօր, Եւրոպայի
 Մարդկային իրաւանց դատարան ներ–
 կայացուած մեր դատը կը հիմնուի նոյն
 դատարանին պաշտպանած Եւրոպայի
 Մարդկային իրաւանց ուխտի հետեւեալ
 երկու հիմնական սկզբունքներուն
 վրայ.– ա) կալուածի սեփականութեան
 վերահաստատում, եւ բ) պաշտամունքի
 իրաւունք, որոնք փաստօրէն իրարու հետ
 սերտօրէն առնչուած են։

Հ.– 6 դեկտեմբեր 2016–ին
 թղթածրարը Եւրոպայի Մարդկային
 իրաւանց դատարան ներկայացուե–
 լէն ետք ի՞նչ են ձեր առնելիք յա–
 ջորդ քայլերը։

Ն. Պ. Գ.– Ինչպէս յիշեցիք,
 թղթածրարը 6 դեկտեմբեր 2016–ին
 յանձնուեցաւ Եւրոպական դատարան։
 Այժմ կը սպասենք, որ դատարանը ըն–
 դունի դատի քննարկումը կատարել եւ
 ապա անցնի ըստ էութեան քննարկումի
 փուլերուն։ Այս հանգրուանին, որպէս
 արգելք տակաւին ունինք թրքական
 դատական ներքին ուղիները ու պայ–
 մանները ամբողջութեամբ լրացուցած
 չըլլալու դժուարութիւնը. բան մը, որ
 եթէ կատարած ըլլայինք, ինչպէս ըսինք,
 մեզ փապուղիի առջեւ պիտի դնէր ու
 անելի մատնէր։ Սակայն, հարկ է նշել, թէ
 Եւրոպայի Մարդկային իրաւանց դատա–
 րանի պարագային եւս մեր փաստաբան–
 ները մեծ աշխատանք տարին ու շուրջ
 հազար էջերէ բաղկացած մեր դատական
 թղթածրարին մէջ հարկ եղած հիմնաւո–
 րումները ներկայացուցին։ Անոնք նաեւ
 սերտեցին իւրաքանչիւր հաւանական
 պատասխանի այլընտրանքները։

Միսի կաթողիկոսարանի դատի
 փորձառութեանէն մեկնելով, կարելի է եզ–
 րակացնել, թէ որքան դժուար է ու փշոտ
 պահանջատիրութեան իրաւական ուղին,
 մանաւանդ ժամանցելութեան խնդրին
 եւ կալուածներու վերադարձի գծով
 թուրք պետութեան կողմէ դրուած ար–
 գելքներուն պատճառով։ Սակայն, այդ
 բոլորը մենք արգելք չնկատեցինք ու
 հետեւեցանք Արամ Ա. կաթողիկոսի խի–
 զախ որոշումին։ Նաեւ այս գիտակցուե–
 թեամբ ու նուիրումով գործեց մեր իրա–
 ւական յանձնախումբը։ Արդարեւ, 100
 տարիներ յետոյ Թուրքիոյ Սահմանադ–
 րական դատարանին, ապա Եւրոպայի
 Մարդկային իրաւանց դատարանին մէջ
 դատ բանալը մեծ մարտահրաւէր մըն էր։
 Մեր փորձառութիւնը ցոյց տուաւ, թէ
 եթէ աւելի երկար սպասէինք, շատ ուշ
 պիտի ըլլար։ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթո–
 ղիկոսութիւնը իրաւական դաշտ մտնելու
 եւ հողային պահանջը ներկայացնելու
 առաջին քայլը առաւ։ Հարկ է չարունա–
 կել այս ուղին։ Պէտք է անտեսել պե–
 տական ուղիներով եւս իրաւական մարդ
 ներկայանալու ընտրանքը, որ ինչպէս
 քննարկուեցաւ 2012–ի Անթիլիասի
 խորհրդածողովին, Հայաստանի Հանրա–
 պետութեան առջեւ կը բանայ իրաւա–
 կան հետապնդումի տարբեր հնարաւո–
 րութիւններ։

(Ծար. 2 եւ վերջ)





Հ.Յ.Ֆ.
ՄԻՇՐԱՆ ՓԱՓԱՋԵԱՆ
ԿՈՄԻՏԵՈՒԹԻՒՆ

ՎԱԹՍՈՒՆ ԱՄԵԱՅ ԵՐԹԸ
ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ

ՄԻՕՐԵԱՅ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ

Նուիրում՝
ՀՅՖ Միհրան Փափազեան Կոմիտեութեան
Հիմնադրութեան 60-ամեակին

25 Մարտ 2017
Բաստրմաճեան Սրահ, Մոնթրէալ

ՕՐԱԿԱՐԳ

- | | |
|-------------|--|
| 12:15-12:45 | Արձանագրութիւն եւ Ընդունելութիւն |
| 12:45-1:00 | Բացման խօսք |
| 1:05-1:30 | ՀՅՖ - Ընկերվար Միջազգային Կառոյց եւ Գանատա |
| 1:30-1:55 | Հարց-պատասխան |
| 1:55-2:05 | Դադար |
| 2:05-2:30 | ՀՅՖ Մամուլի դերը, քաղաքական հասարակութիւնը |
| | եւ Հասարակական Կարծիքը |
| 2:30-2:55 | Կլոր սեղան |
| 2:55-3:05 | Դադար |
| 3:05-3:30 | «Վաթսունամեայ Երթը կը շարունակուի» |
| 3:30-3:55 | Երիտասարդական Քննարկում |
| 3:55-4:15 | Խորհրդածողովի ամփոփում եւ փակման խօսք |

Մանրամասնութիւններ յաջորդ յայտարարութեամբ:

«Դիտորդների Յայտարարութիւնները Ապտակ Եճ Ատրպէճաճիճ»

«ԱՊԱՌԱԺ»Ի ՀԱՐՑԱԶՐՈՅՑԸ ՀՅԴ ՀԱՅ ԴԱՏԻ ԵԻՐՈՊԱՅԻ ՅԱՆԶՆԱԽՄԲԻ ՆԱԽԱԳԱՀ ԳԱՍՊԱՐ ԿԱՐԱՊԵՏԵԱՆԻ ՀԵՏ

Փետրուարի 20ին, Արցախում կայացած Սահ–մանադրութեան հանրաժուէին ՀՅԴ Հայ Դատի Եւ–րոպայի յանձնախմքի ճախածնոութեամք՝ 18 հոգուց բաղկացած դիտորդական առաքելութիւճ ժամանեց Արցախ։ Դիտորդական խմքի առաքելութեան, հան–րաժուէի քուէարկութեան ընքացքի եւ ալլ հարցերի շուրջ «Ապառած»ը գրուցել է ՀՅԴ Հայ Դատի Եւրո–պայի յանձնախմքի ճախագահ Գասպար Կարապետ–եանի հետ։

ՏԱԹԵԻԻԿ ԱՂԱԶԱՆԵԱՆ.– Դիտորդական խմքի անդամները եղան Արցախի բոլոր շրջանների տարբեր ընտրատեղամասերում։ Իճչպիսի՞ճ էր քուէ–արկութեան ընքացքն՝ ըստ դիտորդների տպաւորու–թեան։

ԳԱՍՊԱՐ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ.– Ինչպէս Արցախի Ազգային ժողովի ընտրութիւնների ժամանակ, այս ան–գամ էլ մեր դիտորդների եզրակացութիւնը նոյնն էր։ Միջազգային բոլոր չափանիշներին համապատասխան ընտրութիւններ են կայացել, յարգուել է ընտրական օրէնքը, ընտրատարածքների ներսում խնդիրներ չեն արձանագրուել, յանձնաժողովների նախագահներն իրենց գործը կատարել են։ Արցախ ժամանած Պելճիքա–ցի երկու խորհրդարանականները եւս օրինակելի գնա–հատեցին ընտրութիւնները։

Զճանաչուած պետութեան համար նման ընտրու–թիւններ կատարելը մեծ ձեռքբերում է։ Ըստ դիտորդ–ների՝ այս իմաստով առաջընթաց է տեղի ունեցածը։ Քուէարկութեան ճիշդ կազմակերպմամբ Արցախին մրցակիցների համեմատութեամբ յաւելեալ առաւելու–թիւն տրուեց։ Ամէն ինչը կարող է դերակատարութիւն ունենալ։

Երբեք չեա կարող իմանալ՝ վաղն ինչ կարող է պատահել եւ ինչ հոլովոյթներ կը լինեն, բայց այսօր–ուայ դրութեամբ վաղը լուրջ փոփոխութիւններ չեն սպասուում։ Նման դէպքերում ամէն փոքր քար նպաս–տում է, օժանդակում է, որպէսզի տուը կառուցուի։ Եւ այս փոքր քարերն իրենց դերակատարութիւնը կարող են ունենալ։

Պատուիրակութեան անդամների վկայութեամբ՝ այս երկիրը յարգում է բոլոր ժողովրդավարական նոր–մերը։ Հակառակ չճանաչուածութեանը՝ կայացած պե–տութիւն է, որն ունի գործող բոլոր համապատասխան ժողովրդավարական կառոյցները՝ ի հակադրութիւն Ար–ցախի գոյութիւն չունենալը պահանջող երկրի։ այնտեղ նման կարգեր չկան։ Սա հաստատուած է համապատաս–խան հարցերով զբաղուող բոլոր կառոյցներին ուղղ–ուած գեկոյցով։

Համոզուած եմ, որ այսքան դիտորդների ներկա–յութիւնն այստեղ եւ նրանց տուած յայտարարութիւն–ներն ապտակ են Ատրպէյճանին, որը ծիծաղելի յայտա–րարութիւն տարածեց, թէ նրանք զբօսաշրջիկներ են, տեղի ունեցող գործընթացներից անտեղեակ մարդիկ։ Եթէ անտեղեակ զբօսաշրջիկներ են, ինչո՞ւ է Ատրպէյ–ճանն այդքան մտահոգւում, աշխարհը տակնուվրայ անում։

ՏԱԹԵԻԻԿ ԱՂԱԶԱՆԵԱՆ.– Ըստ ձեզ, կարո՞ղ է կայացած հանրաքուէն ճպաստել Արցախի միջազգա–յին ճանաչման գործին։

ԳԱՍՊԱՐ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ.– Զեմ կարծում, թէ Սահմանադրութիւնը կարող է էական բան փոխել ար–դէն տեղի ունեցող գործընթացում։ Այդ ուղղութեամբ էլ պէտք է համակարգուած կերպով աշխատանքները շարունակուեն թէ՛ մեր կողմից, թէ՛ պետութեան կողմից, որպէսզի կարողանանք արտաքին աշխարհին ճիշդ պատկերը ներկայացնել։ Ատրպէյճանը խեղաթիւրուած է ներկայացնում պատկերը։ Մենք պէտք է ճիշդ աշխա–տենք, ճիշդ ներկայացնենք իրականութիւնը եւ կարո–ղանանք հնարաւորինս շատ մարդ բերել Արցախ։ Իրենց աչքերով տեսնելով այս երկրի մշակոյթը, գոյութիւնը՝ Արցախ այցելածները սիրահարուած են վերադառնում։ Օրինակ, որոշ ժամանակ առաջ Պելճիքայից մարդ չի այցելել այստեղ։ Մի տարուայ մէջ Պելճիքայից ժամա–նած խորհրդարանականների թիւը հասաւ 18ի, եւ այդ թիւը կը մեծանայ։ Անշուշտ, մեր աշխատանքների, հրաւէրների, բացատրական աշխատանքների դերն էլ կայ։ Սակայն, հիմնական քարոզողները Արցախ եկած–ներն են։ Մէկը միւսին յորդորում է իր աչքով տեսնել։

ՏԱԹԵԻԻԿ ԱՂԱԶԱՆԵԱՆ.– Ի՞նչ կարող է անել Արցախը միջազգայնօրէն ճանաչուած դառնալու հա–մար։



ԳԱՍՊԱՐ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ.– Ներքին իմաստով՝ Արցախը պիտի է՛լ աւելի աշխատի, որպէսզի ամրապնդի ժողովրդավարութիւնը, հաւասարութիւնը, քաղաքացի–ների կեանքի մակարդակը բարձրանայ։ Օտարերկրացի–ները տեսնում են գեղեցիկ վայրեր, յուշակոթողներ, վանքեր, բարետես Ստեփանակերտն ու Շուշին, բայց տեսնում են նաեւ դիւղերը, չրջանները։ Այնտեղ եւս պէտք է այդ աշխատանքը տարուի, որովհետեւ եթէ դու ներքնապէս գօրեղ ես, նաեւ արտաքին առումով ես հօր։

Ընդհանուր առմամբ՝ դրական են այստեղից ստացուած տպաւորութիւնները, բայց միշտ աւելի բա–րելաւուելու հնարաւորութիւններ կան։ Շատ անգամ եմ կոչ արել, որ այդ ուղղութեամբ պէտք է աշխատել, եր–բեք չգոհանալ եղածով, միշտ հաշուի առնել, որ լաւի թշնամին աւելի լաւն է։ Եթէ սա հաշուի առնեն իշխա–նութիւնները, երկրի վիճակն աւելի կը լաւանայ։

ՏԱԹԵԻԻԿ ԱՂԱԶԱՆԵԱՆ.– ԵԱՀԿ Միսկի խմբի համաճախագահները յայտարարութիւն են տա–րածել, որում աւսում է, որ այս հանրաքուէն որեւէ ազդեցութիւն չի կարող ունենալ Ղարաբաղի իրաւա–կան ճանաչման գործում։ Ի՞նչ կարծիքի ե՛ք դու։

ԳԱՍՊԱՐ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ.– Ինձ համար սպասելի էր նման յայտարարութիւնը։ Այդ կարգի յայտարարու–թիւնները քարոզչական նպատակով արուած յայտարա–րութիւններ են. տեքստը գրուած է, եւ ամէն անգամ նման դէպքերում դարակից հանում ու յայտարարում են, որ չեն ճանաչում ընտրութիւնները։ Անիմաստ բան է, որովհետեւ ի՞նչ է նշանակում, որ չեն ճանաչում հանրաքուէն, երբ խօսքը չճանաչուած երկրի մասին է։ Կամ ո՞վ է հարցնում՝ ճանաչում են, թէ ոչ։

Հանրաքուէն կայացաւ նախ եւ առաջ ժողովրդի համար։ Սահմանադրութիւնը ներքին փաստաթուղթ է, որի հիման վրայ այս ժողովուրդը պիտի ապրի եւ երկի–րը պիտի կառավարուի։ Սահմանադրութիւնը երրորդ կողմին գոհացնելու նպատակ չի հետապնդում։ Եթէ հակաժողովրդավարական օրէնքներ կան երկրի մէջ, ինչպէս օրինակ Ատրպէյճանը, այնտեղ պահանջներ կարող են լինել, բայց Արցախի դէպքում նման պահանջ չկայ։ Եթէ որեւէ մէկը չի ճանաչում երկիրը, ի՞նչ հիմ–քով պիտի այս կամ այն յօդուածները փոխելու պա–հանջ դնի։ Թէ՛ Միոսկի խմբի, թէ՛ մի շարք այլ երկրների յայտարարութիւնները, իմ կարծիքով, անիմաստ են, որովհետեւ եղածի էութիւնը չի փոխւում։ Արցախի ժո–ղովուրդը որոշեց ունենալ այս Սահմանադրութիւնը. ընդունեն–չընդունեն՝ փաստն այս է։

Հիմնական հարցն այն է, որ միջազգային կազմա–կերպութիւնները Ատրպէյճանին համոզեն, որ նրա այ–սօրուայ կեցուածքը չի կարող նպաստել խնդրի լուծմա–նը։ Զկարգաւորուած խնդիրը յատկապէս վատ է Ատր–պէյճանի ժողովրդի համար. Ալիեւը հարցն օգտագոր–ծում է իր ժողովրդին կեղեքելու համար։ Բայց այս ձե–ւով լուծումի չեն հասնում։ Ուստի կարծում եմ, որ չպէտք է մտահոգուել նման յայտարարութիւնից, պէտք է մտահոգուել, եթէ Միոսկի խումբը չաշխատի, չփորձի գտնել արդար լուծումներ։ Այսօրինակ յայտարարու–թիւններն ինձ չեն մտահոգում։

ՏԱԹԵԻԻԿ ԱՂԱԶԱՆԵԱՆ.– Բլոգեր Ալեքսանդր Լապչիճի ձեռքակալութիւնը, ապա արտայնձնումը Բելոռուսից Ատրպէյճան՝ կարծես միջազգային հա–

մարժէք արձագանգի չարժանացաւ։ Զեր կարծիքով՝ ինչո՞ւ Եւրոպան չդատապարտեց դէպքը։

ԳԱՍՊԱՐ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ.– Առաջին անգամը չէ, որ Ատրպէյճանը փորձում է ազդել այլ պետութիւննե–րի, անձերի վրայ, որպէսզի Արցախը մեկուսացուած պահուի։ Անշուշտ, Թ. Սաֆարովի դէպքում, որը շատ ծանր դէպք էր, Եւրոպայի կողմից բաւական լուրջ հա–կազդեցութիւններ եղան։ Եւրոպական խորհրդարանը բուռն կերպով քննադատեց Սաֆարովի դէպքը, ապա յանձնումը Ատրպէյճանին։ Բաւական չըջանակներ քննադատութիւններ հնչեցրին։ Լապչինի պարագայում աւելի մեղմ էին, թէեւ եղան յայտարարութիւններ, ինչ–պէս Եւրոպայի մարդու իրաւունքների պաշտպանի կողմից։ Սակայն պէտք է նկատի ունենալ, որ Լապչինի հարցը դատական առումով այնքան էլ մաքուր չէր, ինչպէս ուքրաինական անձնագրի գործածումը, ուրիշ անունով ներկայանալը։ Ատրպէյճանը հասկանալի պատճառներով այդ քարոզչութիւնը կատարեց, որպէս–զի վախեցնի հաւանական այլ այցելուների՝ ներշնչելով, որ նրանք եւս կարող են Արցախ այցելելու դէպքում նման փորձանքի ենթարկուել։

Եւրոպան չհակազդեց, որովհետեւ Եւրոպայում եւս մարդու իրաւունքների խախտումներ կան, նաեւ՝ Եւրոպայի հիմնական գործելաոճը պրագմատիզմն է, եւ մտածում են այսօրուայ մասին։ Այնտեղ այնքան էլ նախանձախնդիր չեն մարդու իրաւունքների պաշտ–պանութեամբ։ Թէեւ յայտարարում են, բայց շատ դէպ–քերում, տարբեր շահերի գոյութեան պարագայում, մարդու իրաւունքները կարող են երկրորդական տեղ զբաղեցնել։ Տուեալ պարագայում՝ նրանք գիտեն, թէ ինչպիսի երկիր է Ատրպէյճանը, նաեւ՝ որ բոլոր յարձա–կումները, ինչպէս ապրիլեան պատերազմը, տարբեր մի–ջադէպերը Ատրպէյճանի կողմից են սանձազերծւում։ Բայց առկայ է հաւասարակշռութիւն պահելու փրիսոփ–այութիւնը, եւ դրա համար էլ միշտ երկու կողմերին կոչ են անում սառնարիւն լինել, ծայրայեղութիւնների չգնալ եւ այլն։ Եւ սա աւելի վատ է, որովհետեւ սրանով փաստօրէն քաջայերում են Ատրպէյճանին՝ շարունակե–լու իր կեցուածքը։

Այժմ բանակցութիւններ են տարւում Ատրպէյ–ճանի հետ Եւրոպական Միութեան 1996թ. կնքած գոր–ծընկերութեան ու համագործակցութեան համաձայ–նագրին փոխարինող նոր փաստաթղթի ստորագրման համար։ Այդ պայմաններում, կարծում եմ, նման դէպքի համար Եւրոպայում չեն ցանկանում քննադատական կեցուածք ունենալ եւ աւելի դժուարացնել յարաբերու–թիւնները։ Ատրպէյճանի նախագահը Բրիւսէլում եղած ժամանակ չայցելեց Եւրոպական խորհրդարան։ Եւի 3–4 քաղաքական կուսակցութիւններ Ատրպէյճանում մարդու իրաւունքների հարցի շուրջ կլոր սեղան էին կազմակերպել, որին հրաւիրուած էր նաեւ Պրիւքսէլում գտնուող Ալիեւը։ Սակայն վերջինս հրաժարուեց մաս–նակցելուց։ Հասկանալի է, որ վերջնական որոշում կա–յացնելու իրաւունք ունեցող խորհրդարանը կարող է հարցեր առաջացնել։ Այս պատճառով է, որ պետու–թիւնների կամ յանձնաժողովների կողմից յաւելեալ յայտարարութիւններ կամ քայլեր չեղան։ Մեր յանձ–նախմբի, այլ կառոյցների կողմից կազմակերպուած ցոյ–ցերի պարագայում էլ լուրջ սպասելիք չունէին։

Վարեց՝ ՏԱԹԵԻԻԿ ԱՂԱԶԱՆԵԱՆ



905.761.6484

1450 Clark Ave. West,
Thornhill ON L4J 7R5

LOOKING FOR FULL TIME
CHEF TO GRILL



www.aniristorante.ca

Fine Dining
Catering
Party Room
FOR ALL YOUR NEEDS

Ա. Յակոբ Եկեղեցույ
Հոգաբարձությունը եւ դպրոցի
տնօրենությունը մեծ հաճությամբ կը
իրաւիբն ձեզի



ՍՈՒՐԲ ԶԱԿՈՒ
ԱՐԳԱՅԻՆ ՎԱՐՅԱՐԱՆ
ՀԱՅԿԱՆ ԿՐԹԱՅԻՆ ԿՐԹԱՅԻՆ
ԲԱՍՏԱՐԱԾԻՆ ԵՎ ԿՐԹԱՅԻՆՆԵՐ



ՏԱՐԵԿԱՆ ՀԱՆԳԱՆԱԿԻՉ ՃԱՇԿԵՐՈՅԹԻՆ

Ի Նպաստ Սուրբ Յակոբ Ազգային
Վարժարանի
Վ. Եւ Ա. Մարաֆեան Նախակրթարանի
Եւ Բաստարձան Երկրորդականի

Հարգւած,
→ **1 ԱՊՐԻԼ** 2017
Երեկոյեան Ժամը 6:30 ին

Մոնթրէալի Հայ Կեդրոն



Տեղեկութեանց եւ տեղեր
սպասեցուցելու համար դիմել
Տիկ. Իլլապէլ Եօաննանին
514-979-9350

Կը խնդրենք որ ձեր
ներկայութիւնը հաստատէք մինչեւ
24 Մարտ 2017

Մուտքը նոյն իրաւունքներով
Տուրք չէր իրաւունքներով
50\$ եւ վեր նոյն իրաւունքներով





CASSANDRA I.D.A. PHARMACY

ARMENIAN MEDICAL CENTRE
& PHARMACY

PHARMACISTS

SARKIS BALIAN, BScPhm, RPh
MARAL BALIAN, PharmD, RPh
VARTAN BALIAN, PharmD, RPh

ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐ՝
ՊԱԼԵԱՆ ԸՆՏԱՆԻՔ

ԴԵՂԱԳՈՐԾՆԵՐ՝
ՄԱՐԱԼ ՊԱԼԵԱՆ
ՎԱՐԴԱՆ ՊԱԼԵԱՆ

- Դեղագիրներու պատրաստութիւն՝ շաբաթական յատուկ տուփերու մէջ:
- Արեան ճնշման քննութիւն եւ հետեւողականութիւն՝ անվճար
- Շաքարախտի քննութիւն
- Դեղերը իրենց հասցէներուն առաքելու անվճար սպասարկութիւն
- Տարեցներու 10% զեղջ
- Կը յարգենք եւ սիրով կը կատարենք բոլոր ապահովագրական ընկերութիւններու պայմանները
- Walk-In Clinic բաց է շաբաթը 6 օր: Կրնաք բժիշկները տեսնել առանց ժամադրութեան:

Դիմեցէք մեզի եւ պիտի դառնաք մեր մնայուն յաճախորդը:

Walk-in Clinic onsite: (416) 331-9111

հասցէ՝ 2040 Victoria Park Ave. (Victoria Park & Cassandra)
Toronto, Ontario M1R 1V2 Tel: (416) 449-2040 Fax: (416) 449-2048



Հորիզոն

ՇԱՐԱԹՎԱԹԵՐԹ

Օգոստոս 25 - Սեպտեմբեր 8



Միացե՛ք «Հորիզոն»ի Հայաստան-Արցախ շրջապտույտին, որպեսզի Սեպտեմբեր 2-ին Ստեփանակերտի մեջ, Արցախի մեր քույրերուն եւ եղբայրներուն հետ միասին տօնենք Արցախի անկախութեան տարեդարձը:

Տեսարժան վայրերուն մեջ ընդգրկուած են.

Դադիվանք, Գանձասար, Սեւանայ լիճ, Քարվաճառի անտառներ, Հանդաբերդ, Մակարավանք...

Խրախճանք Դիլիջանի անտառներուն մեջ եւ Արցախի հայկական գիւղերուն մեջ:

Այցելութիւն Հայկական Բանակի զօրանոց:

Գին՝ \$3450.00 Double Occupancy | \$3650.00 Single Occupancy

Օդանաւի տոմս, հիւրանոց, շրջագայութեան փոխադրամիջոցներ, նախաճաշ, ճաշ, ընթրիք եւ համերգներու, պտույտներու (Տաթևի ճոպանուղի) տոմսեր ներառեալ: Ձեր հիւրանոցէն Երևանի Հանրապետութեան հրապարակ քալելով 2 վայրկեան է՝ www.hotelaviatrans.am

Արձանագրուելու համար հեռաձայնէլ 514 332-3757 թիւին:





Dr. Armen Boyrazian

American and Canadian Board Certified Family Physician

Armenian and English speaking

Accepting new patients

In house Specialty Services include:

Cardiology
Neurology
Dermatology
Obstetrics and Gynecology
Respirology
Physical Therapy/Chiropractic
Orthopedic Surgery
Allergy and Immunology
General Surgery

Other services include:

Full Lab Service
X-ray and Ultrasound
Sleep clinic
CPAP fitting and devices
Pulmonary Function Tests
Bone Mineral Density
Hearing Centre

FAMILY MEDICAL CENTRE

Monday and Tuesday 9am - 8pm
Wednesday and Thursday 9am - 5pm
Friday 9am - 4pm
Saturday (Walk-in) 8am - 3pm



2130 Lawrence Avenue East
Suite 308
Scarborough, Ontario, M1R 3A6

Quick referrals guaranteed!

Call 416-298-0666

ACD MED
Advanced Cardio Diagnostics

Full Cardiac Service
Main Floor Suite 106
7 days a week

Prompt Service
Ask your doctor for a referral



Career Opportunities in the
Medical field

- **Massage therapy**
- Lab Technician
- **Pharmacy Assistant**
- Dental Hygienist

and many more!
1.866.962.7685

visit
www.medixcollege.ca
today



For **ALL** your hearing needs

Get your **FREE** Hearing screen
Walk-ins Welcome



We speak your language
FREE Delivery
Extended Hours

Full price matching for prescription drugs
Guaranteeing lowest prices



ԲԱԲԳԷՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ Առաջնորդ՝ Գանատայի Հայոց Թեմին

Աստուած մարդը ստեղծեց իր պատկերին համաձայն եւ երջանիկ «դրախտային» կեանք մը պարգեւեց անոր: Սակայն, երջանկութեամբ լեցուն դրախտային կեանքին մէջ, առաջին պահքի սուրբ օրէնքը հաստատուեցաւ, «Դրախտին մէջ գտնուող բոլոր ծառերու պտուղներէն կրնաս ուտել, բայց բարիի եւ չարի գիտութեան ծառէն պէտք չէ ուտես, որովհետեւ այն օրը, երբ անկէ ուտես, անկասկած կը մեռնիս...»:

Մեր նախածնողները չպահեցին պահքի առաջին օրէնքը: Անոնք անհնազանդ գտնուեցան աստուածային կամքին, արգիլուած պտուղը ուտելով՝ ճաշակեցին մեղքի եւ մահուան դատապարտութիւնը, փոխանակ ճաշակելու Աստուծոյ պատուիրաններուն քաղցրութիւնը: Հետեւեալը, մարդը հեռացաւ Աստուծմէ, մեղքի տիղմին մէջ ընկղմեցաւ: Մարդուն հոգիին մէջ մեղքի վէրքեր բացուեցան, ան մեղքի տեսակ-տեսակ հիւանդութիւններու մէջ ինկաւ, մէկ խօսքով՝ մարդուն մէջ խաթարուեցաւ աստուածային իսկական պատկերը:

Այո՛, նախածնողներուն արտօնուած էր ուտել դրախտի բոլոր ծառերու պտուղներէն, ի մասնաւորի «Կեանքի ծառ»ի պտուղէն: Արգիլուած էր ուտել «բարիի եւ չարի գիտութեան ծառ»էն: Այս բոլոր ծառերը կը խորհրդանշէին Աստուծոյ պատուիրանները, որոնք երկու խումբերու կը բաժնուէին՝

ԴՐԱԿԱՆ ԵՒ ԺԽՏԱԿԱՆ:

Դրական պատուիրաններն են՝ «Սիրել Տէր Աստուածը մեր ամբողջ մտքով ու հոգիով, սիրել ընկերը, պատուել հայրն ու մայրը, ուրիշին ընել այն՝ ինչ կ'ուզենք, որ անոնք մեզի ընեն...»: ահա «Կեանքի ծառ»ի պտուղը ուտելու նշանակութիւնը, որ ուրիշ բան չէ, եթէ ոչ՝ մարդը առաջնորդել դէպի փրկութեան ճանապարհ եւ յաւիտենական կեանք: Իսկ ժխտական պատուիրաններն են՝ «Մի՛ գողնար, մի՛ չնար, մի՛ սպաններ, սուտ մի՛ խօսիր, Ինձմէ բացի ուրիշ աստուած մի՛ ունենար...»: Ահա արգիլուած պտուղները, որոնք վնասակար են եւ մարդը կ'առաջնորդեն դէպի մեղք եւ բարոյական անկում:

Պօղոս Առաքեալը կ'ըսէ. «Մէկ մարդով մեղքը աշխարհ մտաւ, եւ մեղքով ալ՝ մահը» (Հռ 5.12): Մեղքը Աստուծոյ կամքին եւ պատուիրաններուն անտեսումն է, որ մեզ կը բաժնէ եւ կը հեռացնէ երջանկութեան եւ բարիքներու Աղբիւրէն՝ Աստուծմէ: Մեր եկեղեցւոյ հայրերուն կողմէ ճշդուած Քառասնօրեայ պահեցողութեան չրջանը առիթ մը կու տայ մարդուն ինքնաքննութեամբ, ինքնահայեցողութեամբ, ինքնաճանաչումով սրբազրելու իր սխալները, անդադար աղօթելով, խոստովանութեամբ եւ զղջումով ու մանաւանդ ապաշխարութեամբ իր կեանքի ընթացքը փոխելու, մաքրելու սիրտը, միտքն ու հոգին եւ իր հայեացքը վերստին դարձնելու դէպի երկնաւոր Հայրը՝ իր Արարիչը:

«Պահք պահել» այսօր չի նշանակեր միայն որոշ կերակուրներէ հեռու մնալ, այլ ինքնին կը նշանակէ մարմինը տկարացնելով հոգին գորացնել. մէկ խօսքով՝ Աստուծոյ կամքը կատարել եւ աստուածային պատուիրաններուն հնազանդիլ, այլ խօսքով՝ ճաշակել աստուածային պատուէրներուն քաղցրութիւնը:

Զատկուան նախորդող շաբաթը՝ Ծաղկազարդէն մինչեւ Ս. Զատիկ եօթնօրեակը, կը կոչուի Աւագ Ծաբաթ, Մեծ Ծաբաթ: Աւագ կը կոչուի նաեւ այդ շաբթուան իւրաքանչիւր օրը:

Աւագ Ծաբաթը Յիսուսի երկրային կեանքին եւ չարչարանքներուն վերջին շաբաթն է, որ կը սկսի Կիրակի օրը՝ Ծաղկազարդով՝ Երուսաղէմ Յիսուսի մուտքով:

Ծաթթուան իւրաքանչիւր օրը ունի իր հոգեւոր խորհուրդը: Աւագ Երկուշաբթին տերեւազարդ բայց անպտուղ թղենին անիծելու եւ Տաճարը մաքրելու օրն է: Աւագ Երեքշաբթին յիշատակն է տասը կոյսերու առակին եւ Վերջին Դատաստանի բացատրութեան, ինչպէս նաեւ ջրհեղեղի եւ մարդկութեան կրկին սկզբնաւորման: Աւագ Չորեքշաբթի օրը կը յիշատակուի Քրիստոսի օծումը եւ Յուդայի մատնութիւնը: Այդ օրը Բեթանիոյ մէջ, Սիմոն Բարձրի տունը կին մը թանկարժէք իւղով կ'օծէ Յիսուսը, ինչ որ կը խորհրդանշէ Տիրոջ մօտալուտ մահը: Աւագ Հինգշաբթի առաւօտեան կը մատուցուի Ս. Պատարագ, որ կը խորհրդանշէ Քրիստոսի գոհաբերութիւնը՝ մարդոց փրկութեան եւ մեղքերու թողութեան համար: Երեկոյեան յիշատակն է Վերջին Ընթրիքին՝ Ս. Հաղորդութեան խորհուրդի հաստատման եւ Ոտնրուայի: Երեկոյեան ժամերգութենէն ետք կը կատարուի Ուաւարման արարողութիւնը, որ կը խորհրդանշէ Յիսուսի մատնութիւնն ու չարչարանքը: Աւագ Ուրբաթը Յիսուսի ձերբակալութեան, խաչելութեան, մահուան ու թաղման յիշատակի օրն է: Աւագ Ծաբաթ, դժոխքի աւերում. Քրիստոս իր մահէն ետք իջաւ դժոխք, աւերեց զայն՝ փրկութիւն չնորհելով «ննջեցեալ սուրբերու»՝ արդարներու հոգիներուն: Երեկոյեան կը կատարուի Ճրագալոյցի Պատարագ, եւ կը տրուի Յիսուսի Յարութեան Մեծ Աւետիսը, եւ իր աւարտին կը հասնի նաեւ Մեծ Պահքը:





ՀՈԳԵԻՈՐ ՄՏՈՐՈՒՄՆԵՐ

ԲԱՐՈՅԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Հեղինակություն բառը, որեւէ լեզուով եթէ ուզենք բացատրել, ինքնին ուժեղ բառ է: Յատուկ ուժականություն մը կայ անոր մէջ: Երբ հեղինակություն բառը կը լսենք, մեր մէջ կ'արթննայ յարգանքի, երբեմն երկիւղածությունեան, վախի, երբեմն պարտական ըլլալու, գերի ըլլալու զգացումները: Հեղինակություն բառը առանձնաշնորհում ցոյց կու տայ, օրէնք, կարգ ու սարք, կառավարություն եւ մանաւանդ գերակշիռ ազդեցություն ցոյց կու տայ:

Այս բոլորին մէջ եկէք տեսնենք, թէ Քրիստոս ինչպէս, գործածեց այս բոլորը, այսինքն իր հեղինակությունը: Քրիստոսի հեղինակությունը գերակշռեց աշխարհի բոլոր թագաւորներուն եւ իշխանաւորներուն հեղինակությունները: – Մատթէոսի աւետարանի 28րդ գլխուն 18րդ համարին մէջ Յիսուսի հետեւեալ խօսքը կը կարդանք. «Ամէն իշխանություն տրուեցաւ ինծի երկինքի մէջ եւ երկրի վրայ»: Յիսուսի կողմէ կատարուած այս յայտարարությունը ցոյց կու տայ, որ ինք տէրն է օրէնքին, ուժին եւ առանձնաշնորհումներուն: Ան ինքզինք համարատու չզգաց եւ բացատրություն չտուաւ քահանայապետներուն: Մատթէոսի 7րդ գլխուն 28րդ համարին մէջ կը կարդանք հետեւեալը. «Երբ Յիսուս վերջացուց այս խօսքերը, ժողովուրդը կը հիանար անոր ուսուցման վրայ, որովհետեւ հեղինակութեամբ կ'ուսուցանէր եւ ոչ թէ օրէնքի ուսուցիչներուն պէս»:

– Մատթէոսի 9րդ գլխուն մէջ, երբ Յիսուս անդամաւորը կը բժշկէ ըսելով քաջալերուէ՛, որդեակ, մեղքերդ ներուած են, այնտեղ գտնուող օրէնքի ուսուցիչները իրարու կ'ըսեն, թէ կը հայհոյէ այս մարդը: Սակայն Յիսուս կը պատասխանէ ու կ'ըսէ. «Բայց պէտք է գիտնաք, թէ Մարդու Որդին երկրի վրայ իշխանություն ունի մեղքերը ներելու»:

Յիսուսի հեղինակությունը աւելի լաւ հասկնալու համար Լատիներէնի մէջ սուրբ գրային երկու բառեր կան, որոնք նոյն իմաստը ունին, սակայն տարբեր մօտեցումներով, Տունամիս եւ Էկզուսիայ: Տունամիս կը նշանակէ ուժ, իսկ Էկզուսիայ կը նշանակէ թէ՛ ուժ եւ թէ՛ հեղինակություն: Սակայն այս երկուքը կը տարբերին իրենց բացատրություններով, ուժ ունենալ կը նշանակէ բան մը ընելու կարողությունը ունենալ, Սակայն Էկզուսիային պարագային, թէ՛ ուժ ունինք եւ թէ՛ իրաւունքը, այսինքն՝ հեղինակությունը: Ամէն ուժ ունեցող մարդ չի նշանակեր, թէ իրաւունք ու հեղինակություն ունի:

Վերջապէս, մարդոց սրտերը գրաւելու համար եւ անոնց կեանքին մէջ մեր հեղինակությունը ազդու դարձնելու համար, պէտք է բանեցնենք պարզութեան, խոնարհությունեան, փոխ յարգանքի ու սիրոյ առաքինությունները: Թագաւորներ, իշխանաւորներ, դատաւորներ, կրօնաւորներ, իրենց ամբողջ հեղինակութեամբ, մահուան ենթակայ են, միակ մնայունը անոնց խոնարհաբար կատարած ծառայությունն ու գործերն են:

Պօղոս Առաքեալ կորնթացիներուն գրած համարահատուածով կ'ըսէ. «Բայց շուտով պիտի գամ, եթէ Տէրը կամենայ, ոչ թէ այդ հպարտացած մարդոց խօսքերը լսելու, այլ անոնց զօրութիւնը տեսնելու համար: Որովհետեւ Աստուծոյ արքայությունը խօսքով չէ, որ ինքզինք կը յայտնէ մարդոց կեանքին մէջ, այլ՝ գործով»:



Լաւրան Լոր. Թաշէաս

ՎԿԱՅՈՒԹԻՒՆ

Տարիներ առաջ, փոթորկոտ գիշեր մը, տարեց մարդ մը ու իր կինը Ֆիլատելֆիոյ մէջ պանդոկ մը մտան: Անձրեւէն պատասպարուելու համար, անոնք մօտեցան գրասեղանին ետին կեցող պաշտօնէային եւ խնդրեցին, որ այդ գիշերուան համար սենեակ մը ունենային: Պաշտօնէան, որ ժպտաղէմ երիտասարդ մըն էր, նայեցաւ զոյգին եւ ըսաւ, թէ քաղաքին մէջ երեք համագումարներ կային այդ օրերուն, եւ բոլոր սենեակները գրաւուած էին: Բայց, չեմ կրնար ձեզի պէս ազնիւ զոյգ մը դուրս դրկել գիշերուան ժամը մէկին, անձրեւին տակ: Արդեօք կը յօժարի ք իմ սենեակս պատկիլ: Թէեւ շքեղ չէ, բայց կրնաք հանգիստ գիշերել հոն: Երբ զոյգը մերժեց, երիտասարդը պնդեց. մի՛ մտահոգուիք ինծի համար, ըսաւ ան զանոնք վստահեցնելով: Ես տեղ մը կը գտնեմ պատկելու:

Թէեւ քիչ մը դժկամելով, զոյգը ընդունեց հոն գիշերել այդ օր: Յաջորդ առաւօտ մինչ տարեց մարդը վճարումը ըրաւ, երիտասարդ պաշտօնէային դարձաւ եւ ըսաւ, «Դուն այդպիսի ազնիւ մարդ մըն ես, որ արժանի ես Միացեալ Նահանգներու լաւագոյն պանդոկին տնօրէնը ըլլալու: Թերեւս, օր մը, հատ մը կը կառուցանեմ քեզի համար»:

Երիտասարդը ժպտալով նայեցաւ եւ երեքը միասին խնդացին: Երկու տարիներ անցան: Պանդոկի պաշտօնէան գրեթէ մոռցած էր այդ պատահարը, երբ նամակ մը ստացաւ տարեց մարդէն: Երկտողը կը յիշէր այդ փոթորկոտ գիշերը եւ Նիւ Եորք երթուղարձի տուն մը կար պահարանին մէջ: Երիտասարդը որպէս քաղաքավարութիւն, Նիւ Եորք գնաց, ուր տարեց մարդը զինք դիմաւորեց եւ տարաւ Մէնհէթընի կեդրոնը, ուր մատնանշեց քաղաքին մէջ տեղ կառուցուած մեծ նոր շէնք մը, որ երկնասլաց պալատի կը նմանէր:

«Այս, ըսաւ մարդը, պանդոկն է, գոր քեզի համար շինեցի, որուն տնօրէնը պիտի ըլլաս»: «Կատակ է» ըսաւ երիտասարդը զարմանքով: «Կը վստահեցնեմ, թէ չեմ կատակեր», պատասխանեց մեծահարուստը: Այս մարդուն անունն էր William Waldorf Astor, եւ հոյակապ շէնքը Մէնհէթընի Waldorf-Astoria Hotel-ն էր: Երիտասարդը, որ այս պանդոկին պատասխանատու տնօրէնը եղաւ George Boldt-ն էր: Ան երբեք չգիտցաւ, թէ իր ըրած բարիքին փոխարէն աշխարհի ամենամեծ եւ շքեղ պանդոկին առաջին տնօրէնը պիտի ըլլար:

Աստուծոյ խօսքը կ'ըսէ՝ «Քու հացը ջուրերուն վրայ ձգէ, վասնզի շատ օրերէն ետքը զանիկա պիտի գտնես» (Ժող. 1:1):

ՍՈՒՐԲԵՐ

Հայ Առաքելական եկեղեցւոյ Կոնստանդնուպոլսի Սուրբեր

Աբգար Նախավկայ եւ Անդրանիկ Հաւատաւար թագաւոր

Աբգար թագաւորին քրիստոնէութեան դարձի ամբողջ պատմությունը Մովսէս Նորենացի կը ներկայացնէ իր Հայոց Պատմություն երկրորդ գիրքի 26-էն 33-րդ գլուխներուն մէջ:

Մովսէս Նորենացի Աբգար թագաւորը կը նկատէ Հայոց թագաւոր, հաւանաբար այն պատճառով որ Եղեսիոյ մէջ այն ժամանակ կը գտնուէին բազմաթիւ հայեր, եւ հաւանաբար անոնց թագաւորը եղած էր Աբգար:

Աբգար իր թագաւորութեան օրերուն կը վարակուի մորթային հիւանդութենէ մը: Ան յուսահատ բժիշկներու ապարդիւն փորձերէն, իր պատգամաւորներէն կը լսէ Յիսուսի հրաշքներուն ու բժշկություններուն մասին: Անմիջապէս նամակ կը գրէ Անոր, խնդրելով որ իր մօտ գայ եւ բժշկէ զինք: Ան կը վստահեցնէ նաեւ ըսելով, թէ իր երկրին մէջ պիտի գտնէ խաղաղություն եւ ապահովություն հրեաներուն ներկայութեան ու հալածանքներէն:

Քրիստոս, իր կարգին, նամակին պատասխանելով երանի կու տայ Աբգար թագաւորին իր ունեցած հաւատքին համար եւ կը խոստանայ անոր իր համբարձումէն անմիջապէս ետք անպայման աշակերտ մը դրկել իր մօտ, բուժելու համար զինք իր հիւանդութենէն:

Արդարեւ, Քրիստոսի համբարձումէն ետք, Թաղէոս Առաքեալ կու գայ Աբգար թագաւորին մօտ, կը բուժէ զայն եւ դարձի բերելով քրիստոնեայ կը մկրտէ: Աբգար թագաւոր, նեցուկ կանգնելով Թաղէոս Առաքեալին, կը տարածէ քրիստոնէությունը իր իշխանութեան տակ գտնուող ժողովուրդին մէջ եւ կը քաջալերէ բոլորը, որպէսզի քրիստոնեայ մկրտուին: Աւելին, նամակներ կը դրկէ Հռոմի կայսեր ու այլ թագաւորներու, վկայելով Քրիստոսի մասին եւ խնդրելով որ ազատություն շնորհեն քրիստոնեաներուն եւ որեւէ ձեւով չնեղեն զանոնք:

Այսպիսով, Աբգար կը հանդիսանայ առաջին թագաւորը, որ կ'ընդունի քրիստոնէությունը եւ կը վկայէ Քրիստոսի մասին բազմաթիւ թագաւորներու դիմաց: Կը վախճանի խաղաղ մահուամբ:



LE CONTE DU ROI AIMANT

Nous allons voyager dans le temps à un royaume. Le roi de ce pays possédait tout ce dont il avait besoin pour être heureux : richesse, personnel fidèle, des terres... Mais malgré tout cela, il était malheureux...

Il était désespérément amoureux! Lui, riche membre de la royauté, était tombé amoureux d'une femme pauvre, qui n'avait pas d'éducation et de noblesse! L'amour qu'il avait envers elle ne pouvait pas être compris ou expliqué, mais il l'aimait.


Le roi était malheureux parce qu'il ne savait pas comment montrer à cette femme combien il l'aimait!? Comment allait-il combler le fossé entre les deux? Ses conseillers lui ont recommandé de proposer simplement le mariage - il était un homme puissant après tout! Cependant le pouvoir, même le pouvoir illimité, ne peut pas faire respecter l'amour. Il pourrait la forcer à venir au palais; Mais il ne pouvait pas la forcer à faire croître l'amour dans son cœur pour lui. Il pourrait peut-être obtenir son obéissance avec puissance, mais le roi ne voulait pas lui soumettre aucune force. Il désirait ardemment qu'elle l'aime librement de tout son cœur! Au vu des faits, les conseillers lui suggèrent de conférer son amour et son cœur à une femme de sa qualité et à une femme digne. Mais le roi ne peut pas et ne veut pas!

Les conseillers du roi ne voient qu'une option pour essayer de combler le fossé entre le roi et la pauvre femme. Le roi lui donnerait des cadeaux précieux et la rendrait plus noble. Le roi le prend en considération et dit: «Comment saurai-je qu'elle m'aime, et non ce que j'ai et que je lui donne? Serait-elle en mesure de faire confiance et d'oublier que je suis roi et qu'elle est une pauvre femme? Le roi ne voit qu'une possibilité pour atteindre son but - à savoir l'amour de cette femme.

Il quitte son trône, enlève sa couronne et enlève ses vêtements royaux. Il tire quelques chiffons et se met dans une hutte sordide. Le roi ne prend pas seulement la forme extérieure d'un fermier, mais aussi la vie et les rigueurs d'un fermier. Il devient aussi pauvre que la femme qu'il aime afin qu'elle puisse être avec lui pour toujours et l'aimer de sa propre volonté. C'est la seule possibilité. Je trouve vraiment cette histoire impressionnante! J'avoue que ça sonne comme un conte de fées, mais il y'a un amour comme ça!

Pas de conte de fées: Jésus vous aime!

Jésus avait quitté son trône, il avait abandonné sa vie à côté de son père pour vivre ici sur la terre comme un humain mortel! Il est passé



par des hauts et des bas comme nous! Il est même mort pour nous! Pourquoi Jésus!? Pour que nous comprenions à quel point il nous aime, moi et vous!

Youth Jeunesse THE ESSENCE OF FASTING

The first thing that comes to mind the fastest, when speaking about fasting, is food: "what should or should not we eat?" becomes the main question. Albeit depriving ones self of certain foods, especially animal products, plays an important part of fasting, nevertheless it is not and it should not be the sole concern of the believer, who is preparing to fast. Here's what we read in the book of the prophet Isaiah, it is God speaking to his people through the prophet, and it goes like this:

[The people says:] 'We have fasted before you!' they say. 'Why aren't you impressed?'

We have been very hard on ourselves, and you don't even notice it!' [God replies:] "I will tell you why!" I respond. "It's because you are fasting to please yourselves. Even while you fast, you keep oppressing your workers. What good is fasting when you keep on fighting and quarreling? This kind of fasting will never get you anywhere with me. You humble yourselves by going through the motions of penance, bowing your heads like reeds bending in the wind. You dress in burlap and cover yourselves with ashes. Is this what you call fasting? Do you really think this will please the Lord?"

"No, this is the kind of fasting I want: Free those who are wrongly imprisoned; lighten the burden of those who work for you. Let the oppressed go free, and remove the chains that bind people. Share your food with the hungry, and give shelter to the homeless. "Then your salvation will come like the dawn, and your wounds will quickly heal. Give clothes to those who need them, and do not hide from relatives who need your help.

Your godliness will lead you forward, and the glory of the Lord will protect you from behind. Then when you call, the Lord will answer. 'Yes, I am here,' he will quickly reply." (Isaiah 58:3-9). Isaiah's kind of fasting is about selflessness, altruism, and doing justice. That is the essence of fasting, and that's what distinguishes fasting from regular diet.

Father Keghart Kosbakian



Message du Prélat

LA PREMIÈRE RÈGLE DU CARÊME AU PARADIS

Dieu a créé l'homme dans Son image et lui a décerné une vie heureuse et « céleste ». Néanmoins, dans cette vie céleste et remplie de bonheur, la première règle sacrée du carême a été établie. « Tu peux manger de tous les arbres du paradis, mais tu ne dois pas manger le fruit de l'arbre de la connaissance du bien et du mal, parce que le jour où tu mangeras ce fruit, tu vas certainement mourir ».

Nos ancêtres n'ont pas gardé la première règle du carême. Ils ont désobéi à l'ordre de Dieu et en mangeant le fruit interdit, ils ont mangé le péché et se sont soumis à la mort,

au lieu de jouir du goût sucré des commandements de Dieu. Par conséquent, l'homme s'est éloigné de Dieu et s'est submergé dans le borbier du péché. Les plaies du péché ont été ouvertes et l'homme a connu des maladies différentes et s'est éloigné de l'image de Dieu.

Oui, il était permis à nos ancêtres de manger les fruits de tous les arbres du paradis, particulièrement de « l'arbre de la vie ». Il était interdit de manger de « l'arbre de la connaissance du bien et du mal ». Tous ces arbres représentaient les commandements de Dieu, qui se divisent en deux groupes :

POSITIF et NÉGATIF.

Les commandements positifs sont (fais) : «

Tu aimeras le Seigneur ton Dieu. Tu aimeras ton prochain comme toi-même. Honore ton père et ta mère... » Alors, la signification derrière le fruit de « l'arbre de la vie » est de nous guider vers la délivrance et une vie éternelle. Tandis que les commandements qui ont un précepte négatif sont (ne fais pas) : « Tu n'auras pas d'autre dieu que moi. Tu ne commettras pas de meurtre. Tu ne commettras pas d'adultère. Tu ne commettras pas de vol. Tu ne porteras pas de faux témoignage contre ton prochain. Tu ne convoiteras pas ton prochain ».

Paul l'Apôtre a dit : « Ainsi donc, comme par un seul homme le péché est entré dans le monde, et par le péché la mort ». (Romains 5 :12) Le péché est l'ignorance de la volonté de Dieu et de Ses commandements. Le péché nous sépare de Dieu et nous éloigne du bonheur et de la bonté de Dieu. Le carême de 40 jours que nous observons dans notre église nous offre la chance de prendre la connaissance de soi et de corriger nos erreurs en priant et en changeant notre mode de vie pour avoir un cœur, un esprit et une conscience plus sains et pour que nous retournions à nouveau envers notre Père, notre Créateur.

« Observer le carême » ne signifie pas seulement de se priver de certaines nourritures, mais signifie plutôt l'affaiblissement de notre corps pour fortifier notre esprit. En d'autres mots, exercer la foi de Dieu et obéir aux commandements divins et de régaler sur la douceur de ces commandements.




Archevêque Papken Tcharian



Փորձեցէք ամբողջացնել խաչբառը ի՞նչ տեղադրելով ստորեւ տրուած բառերը

մոմ	խաչ	ջահ	սկիհ	խուճկ	ծնծղայ
սրբանկար	բուրվառ	երգեհոն	ամպիովանի		
շարական	աւետարան				



ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Սփիւռքահայ կրթական վերակազմութիւն

Հայրենի սահմաններէն դուրս, գաղթային երկիրներու միակ հարստութիւնները, որոնք ամբողջութեամբ մեզի կը պատկանին, մեր մշակութային հաստատութիւններն են: Ոչ միայն որպէս անցեալի մէջ հայ մտքի ստեղծագործութեանց գանձապահները, այլ մանաւանդ ներկայի մէջ նոր արժէքներու դարբնոցները: Այդ տեսակ հաստատութեան ամէնէն գործօնն է հայ դպրոցը:

Արդ, ի՞նչ կրնանք ընել այսօր, մեր «բերդը» մերը պահելու համար: Ան մեզի կրնայ պատկանիլ միայն, երբ զայն մերը ընենք:

Արժանի աստիճանով ուկանոնաւորվարչութեամբ նախակրթարաններու հաստատումը՝ պիտի նշանակէր նաեւ անոնց շուրջ հաւաքել ընտիր մտաւորականութիւն մը: Կազմակերպել ուսուցչական միութիւններ, մշտական չփում պահել մտաւորականութեան միջեւ, հաստատել շրջուն դաստիարակչական մատենադարան, ամառնային դասընթացքներ ուսուցիչներու համար, եւ անոնց հետ պիտի զարգանային մեր գրականութեան, գեղարուեստի ու մշակոյթի միւս բոլոր ճիւղերը: Հայ դպրոցը ճառագայթող նոր վառարան մը պիտի դառնայ այս հոծ գաղութին մէջ:

Հաւատանք վերջապէս, որ մեր ազգային մեծագոյն առաքելութիւնը Սփիւռքի մէջ կրթական առաքելութիւնն է, շատ աւելի իրական՝ քան մշակութային միւս բոլոր առաքելութիւնները, եւ շատ աւելի գործնական ու նախապայմանադրական:

Բիւզանդ եղիպեան
«Հասկ» խմբ.
Մայիս-Յունիս 1942



ԱՂՈԹԻՆ ԿԵՅԷԸ ԵՒ ԱՂՈԹԵՑԷԸ

Շնորհակալութիւն կը յայտնեմ քեզի, ո՛վ Տէր, մեր Աստուածը, որ քու ողորմութեամբ մեզ առաջնորդեցիր ցերեկուան մեր գործերուն մէջ եւ շնորհեցիր, որ միասնաբար հասնինք գիշերային այս հանգիստին: Մշտապէս կ'աղաչեմք, որ մեր անձերուն պահապան ըլլաս եւ քու ողորմութեամբ պահես եւ առաջնորդես մեզ քու բարի հանգիստիդ, որ քեզ սիրողներուն տալ խոստացար: Քեզի կը վայելեն փառքը, իշխանութիւնն ու պատիւը, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:



Վերանորոգումը Հին Կոստանյանին մէջ:

Աստուած է աղբիւրը վերանորոգման

ա-Հատ Սաղմոսաց Վարդապետին «ուղիղ խոգի նորոգել» (Մղ 5 1. 10)
բ-Հատ Սաղմոսաց Վարդապետին «Երկրին երեսը նորոգել» (Մղ 104.30)

Վերանորոգումը Նոր Կոստանյանին մէջ:

Բրիտանա ինքն է աղբիւրը վերանորոգման

ա-Բարի Սամարացիին առակը (Մկ 10.25-37)
բ-Կորնուած ոչխարին առակը (Մտ 18. 12- 14)
գ-Երկրորդ կողմերու բժշկութիւնը (Յհ 9.6-7)

Վերանորոգումը Նոր Կոստանյանին մէջ:

Բրիտանա ինքն է աղբիւրը վերանորոգման

ա-Հին ուխտը վերածեց նոր ուխտի (Մտ 26.28)
բ-Հին օրէնքը՝ նոր օրէնքի (Յհ 13.34)
գ-Հին մարդը՝ նոր մարդու (Եփ 4.24)

Վերանորոգումը՝

եկեղեցւոյ առաքելութեան առանցքը

**Վերանորոգման հրամայականը՝
Բրիտանաիւական հայեցակէտով:**

**Վերանորոգման հրամայականը՝
Ազգային հայեցակէտով:**

Մանրասնամութիւններու համար,
դիմեցէք ձեր տեղւոյն եկեղեցւոյ
Հոգեւոր Հովիւին եւ կամ
քարտուղարութեան:

ԱԶԳԱՅԻՆ
ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ

Armenian Prelacy of Canada
Prelature Armenienne du Canada

514-856-1200
514-856-1805 F

prelacy@armenianprelacy.ca armenianprelacy.ca

Զարեհ Ա. Կաթողիկոս 1915-1963

Զարեհ Ա. Կաթողիկոս Փայապեան (1915-1963). Հայոց Սրբակեաց Կաթողիկոսի Լուսապասկ Ճակատը

Փետրուար 18–ին, 54 տարի առաջ, յաւիտենական իր անդորրը գտաւ Հայաստանեայց եկեղեցւոյ նոր ժա–մանակներու սրբակեաց կաթողիկոսը՝ Մեծի Տանն Կի–լիկիոյ երջանկայիշատակ Զարեհ Ա. վեհափառ հայրա–պետը։

ՀՅԴ պատմութեան եւ ազգային–քաղաքական ուղիին երախտաշատ ուսուցիչներէն, այլեւ դեկավար գործիչներէն հանգուցեալ Հրաջ Տասնապետեան, որ նաեւ անձնապէս մօտէն ճանչցած ու գործակիցը եղած էր 48 տարեկանին վախճանած տարաբախտ վեհին, պերճախօս հետեւեալ խտացումով բնութագրած է Զա–րեհ Առաջինի անձն ու տեղը հայոց նորագոյն պատ–մութեան մէջ.

«Մաքրամաքուր եւ սրբակեաց եկեղեցական մըն էր Զարեհ կաթողիկոսը։ Ամբողջական նուիրումով՝ ան կը տքնէր իր հօտի բարօրութեան, Հայաստանեայց եկե–ղեցւոյ եւ հայ մշակոյթի բարգաւաճման համար։ Իր կաթողիկոսութեան 7 տարիները դժբախտ շրջան մը եղան, սակայն, էջմիածնի կաթողիկոսութեան եւ հակա–դաշնակցական ճակատի իրեն հանդէպ ունեցած անո–րակելի վերաբերմունքին պատճառով։ Վախճանեցաւ համեմատաբար երիտասարդ տարիքին, վիշտը սրտին մէջ, բայց մի՛շտ ներելով բոլորին։ Յետմահու այն յար–գանքն ու յուզարկաւորութիւնը, որ Պէյրութը ըրաւ իրեն, աւելի քան յիսուն հազար հոգինոց ժողովրդային թափօրով մը եւ պետական շուքով, տեսնուած չէր գա–ղութներու պատմութեան մէջ»։

Յուշատետրի էջը չափազանց նեղ է Զարեհ Ա. կաթողիկոսի ընտրութեան նախօրէին, թէ աւարտին ստեղծուած հայ կեանքի ծանրագոյն մթնոլորտը նոյ–նիսկ հակիրճ գիծերով ներկայացնելու համար։ Բայց Զարեհ վեհափառի յիշատակին անպայման պէտք է ար–ձանագրել եւ յիշեցնել, որ տարագիր հայութիւնը խորհրդային ազդեցութեան տակ առնելու եւ Քրեմլինի տիրակալութեան ենթարկելու տխուր ու դաժան ոտնձ–գութեանց դարաշրջանին վերջին փուլը կազմեցին Զա–րեհ Առաջինի կաթողիկոս ընտրութեան առիթով տեղի ունեցած ողբերգական իրադարձութիւնները։ Սկսելով Զարեհ Ա.–ի ընտրութեան նախօրէին հակադաշնակցա–կան ճակատի տխրահռչակ անարգումի քայլերէն, անց–նելով Զարեհ կաթողիկոսի ընտրութիւնը «անվաւեր» հռչակելու երջանկայիշատակ Վազգէն Ա. Ամենայն Հայոց կաթողիկոսին պարտադրուած եւ անոր կողմէ ստորագրուած կոնդակէն (որ խորհրդայիններու «ընտ–րական պարգեւ»–ը եղաւ՝ էջմիածնին արգիլելով, որ իր մասնակցութիւնը բերէ Զարեհ Առաջինի կաթողիկոս օծումին) եւ հասնելով սփիւռքի տարածքին հակամարտ թեմերու առաջացումին՝ հայ ժողովուրդը ապրեցաւ իր ժամանակակից պատմութեան դառնագոյն փուլը, որ բարեբախտաբար եղաւ նաեւ վերջին ու եզրափակիչ արարը՝ ազգային պառակտումի օտարամուտ գրգռու–թեանց էջը գոցելու եւ, Հայ դատի պահանջատիրու–թեան ներշնչումով, հայոց ազգային միասնականու–թեան ուղին բանալու առումով։

Հայոց ժամանակակից պատմութեան այդ դառն ու տխուր էջերը փակելու համար կ’արժէ Զարեհ վեհա–փառի վախճանման 54–րդ տարելիցին առիթով ընթեր–ցողին յուշել նոյնինքն երջանկայիշատակ Զարեհ Ա. Փայապեան կաթողիկոսի յետադարձ հայեացքով կա–տարած արժեւորումը իր Մեծի Տանն Կիլիկիոյ գահակալ ընտրութեան՝ 20 փետրուար 1956–ի իրադարձութեանց վերաբերեալ։

Իր կաթողիկոս ընտրութեան 6–րդ տարեդարձը հանդիսաւորապէս նշող Կիլիկեան միաբանութեան ուղ–ղելով իր պատգամը՝ Զարեհ Ա. վեհափառ հետեւեալը յայտարարեց 20 փետրուար 1962–ին.

«Սիրելի՛ միաբան եղբայրներ, սիրելի՛ սաներ, ի սրտէ շնորհակալ եմ ձեր արտաբուխ եւ ազնիւ արտա–յայտութիւններուն համար, որոնք, վստահ եմ, կը բխին նոյնքան ազնիւ սրտերէ։ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողի–կոս ընտրուելուս վեցերորդ տարեդարձը զիս կը լեցնէ անգամ մը եւս ցաւալի եւ ուրախալի յուշերով։

«Արդարեւ, վեց տարիներ առաջ օղը նուազ փո–թորկալից էր, քան այսօր. սակայն փոթորիկ կար այս դահլիճէն ներս, մանաւանդ՝ սրտերէ եւ հոգիներէ ներս։ Պիտի կատարուէր պատմական ընթացիկ դէպք մը՝ ընտրութեամբը Մեծի Տանն Կիլիկիոյ երանաշնորհ Գա–րեգին Ա. կաթողիկոսի յաջորդին։ Բայց կատարուելիք այս ընտրութիւնը զգեցած էր, այս անգամ, բացառիկ հանգամանք եւ իմաստ, որովհետեւ այս Աթոռիս հա–կառակորդները կամ գայն անուանարկել ուզողները կը փափաքէին ընել այնպէս, որ ան դադրի ծառայելէ իր հոգեւոր կոչումին եւ Հիարենայ լրիւ կատարել իր պար–տականութիւնները քրիստոնէական սուրբ կրօնին եւ հայ ժողովուրդին ծառայելու իր կոչումին մէջ։



«Եթէ միայն նիւթական եւ տեսանելի դժուարու–թիւնները հաշուի առնէինք եւ մոռնայինք աստուածա–յին օժանդակութիւնը, իմաստուն գործ պիտի չըլլար յանձն առնել կաթողիկոսական պաշտօնը եւ արտասահ–մանի մեր եկեղեցւոյ կեանքին մէջ այս Աթոռին բաժին ինկող պարտականութեանց կատարումին դեկավարու–թիւնը։ Ու երբ կիլիկեան թեմերու Պատգամաւորական ժողովը իր ձայներու մեծամասնութիւնը կեդրոնացուց իմ վրայ, երեք չխուսափեցալ կոչին դրական պատաս–խան տալէ՝ հակառակ ամէն տեսակ դժուարութեանց, անհասկացողութեանց, խռընդոտներու եւ մինչեւ իսկ բացայայտ թշնամութեան՝ սիրելի անհատներէ կամ նոյնքան սիրելի կազմակերպութիւններէ ի յայտ բեր–ուած։

«Այժմ կ’երեւակայեմ 1956 փետրուար 20–էն մինչեւ աշուն երկարող տաժանելի օրերը, որոնք լեցուն եղան ամէն տեսակի դժուարութիւններով։ Ու կ’ապրի՛մ դառն յիշատակովը ֆիզիքական ամայութեան, որ այս Աթոռին ժամանակաւոր բաժինը եղաւ դպրեվանքի Պիքֆայա փոխադրութեամբը 1956–ի հոկտեմբերին։ Ու մտքով կը տեսնեմ, որ այդ շրջանին Անթիլիասէն ներս հազիւ քանի մը ճրագներ կը պլպլային գիշերները։ Ու գոհութիւն Աստուծոյ, որ մեզի հետ եղաւ մեր ամբողջ գործավարութեան ընթացքին, ահա յարաբերաբար կարճ ժամանակի մը մէջ այս Աթոռը կրկին պայծառա–ցած է, եւ ուրախութեամբ կը դիտեմ անոր բարգաւաճ վիճակը։ Բազմապատկուեցաւ մեր միաբաններուն թիւը եւ արդէն քանի մը տարիէ ի վեր սկսած ենք պատաս–խանել այս Աթոռին ուղղուած կոչերուն՝ առաջնորդներ եւ հովիւներ տրամադրելով հայ համայնքներուն։ Մեր միաբանները չինարար աշխատանքի լծուած են հեռա–ւոր Ամերիկայէն սկսեալ մինչեւ Պարսկաստան, ուր այս Աթոռին անունն իսկ անծանօթ էր տակաւին շատ մօտիկ անցեալին։

«Հաւանական է, որ աւելի հեռու տեղերէ ալ կանչուիք՝ ծառայելու եւ Հայ եկեղեցին կանգուն պա–հելու համար։ Ու պիտի ընդառաջենք այդ հրաւէրնե–րուն ոչ թէ կայսրութիւն հիմնելու, ոչ թէ թեմեր յափշ–տակելու, ու մանաւանդ՝ ոչ թէ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը Ամենայն Հայոց կաթողիկոսութեան հակադրելու համար. նման նպատակ չունեցանք ու պի–տի չունենանք, այլ՝ պարզապէս ծառայելու համար եւ ընելու այնպէս, որ արտասահմանի մէջ չեղծուի Հայաս–տանեայց եկեղեցւոյ նկարագիրը, եւ հայ ժողովուրդը չհեռանայ իր մայր եկեղեցիէն ու կորստեան չգատա–պարտուի։

«Մեր այս ոգին եւ ուղիղ դիրքը չէ հասկցուած դժբախտաբար ու մեզի կը վերագրուին մտայնութիւն–ներ, որոնք նուազագոյնը ուղիղ չեն համեմատիր հայ ժողովուրդին, Հայ եկեղեցւոյ հանդէպ մեր կեցուածքին հետ։ Բայց մենք կ’անգփտանանք այդ բոլորը եւ անտես պիտի առնենք բոլոր տեսակի անհասկացողութիւնները, ուրկէ եւ որքան որ սիրելի անձերէ կամ մարմիններէ բխին անոնք։ Ու պիտի հասնինք հոգեւոր կարիքներուն մեր ժողովուրդին, որուն ծառայելը նկատած ենք միշտ մեր մեծագոյն փառքը։ »Կ’ուզեմ, որ այս ոգիով լեց–

ուիք բոլորդ, որպէսզի նման տարեդարձներ իմաստ ստանան ու դառնան երջանիկ հանգրուաններ մեր ժո–ղովուրդի կեանքին մէջ»։

Զարեհ Առաջին իր անանձնական մօտեցումով, ներողամտութեան ոգիով եւ անսահման բարութեամբ ու նուիրումով մեծ ներգրոււմ ունեցաւ պառակտուա–ծութեան այդ տխուր եւ դառն էջերը փակելու եւ հա–մերաշխութեան ու միասնականութեան ենթահող պատ–րաստելու 1960–ականներու շրջադարձին մէջ։ Շրջա–դարձ, որուն բարեբեր արդիւնքները քաղեց հայ ժողո–վուրդը 1965–էն՝ Մեծ եղեռնի յիսնամեակին համահայ–կական ոգեկոչումէն սկսեալ։

Ծնած 1915–ին, Մարաշ, Փայապեան յարկի տակ, Զարեհ Առաջին 1931–ին եղաւ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան Անթիլիասի նորահաստատ դպրե–վանքին անդրանիկ սաներէն։ 1933–1938 հետեւեցաւ Պրիւքսելի համալսարանի հայագիտութեան եւ արեւե–լագիտութեան դասընթացքներուն։ 1939–ին Զարեհ վարդապետ առաջնորդական տեղապահ ընտրուեցաւ Հալէպի թեմին, որուն առաջնորդութեան կոչուեցաւ 1943–ին։ 1947–ին եպիսկոպոս ձեռնադրուեցաւ երջան–կայիշատակ Գարեգին Ա. Յովսէփեան կաթողիկոսի կող–մէ, որուն 1952–ի վախճանումէն ետք, շուրջ չորս տարի տեւած ու Հայաստանեայց եկեղեցին պառակտման եզ–րին հասցուցած ազգային, քաղաքական եւ գաղափա–րական բուռն վէճերէ ու հակամարտութիւններէ յետոյ, 20 փետրուար 1956–ին Զարեհ Առաջին ընտրուեցաւ Մեծի Տանն Կիլիկիոյ Ամենայն Հայոց կաթողիկոս։

Կաթողիկոսական իր պաշտօնավարութեան կար–ճատեւ՝ 7–ամեայ շրջանին, որքան բարեացակամ ու նե–րողամիտ գտնուեցաւ անձնապէս իր դէմ կատարուած գռեհկագոյն բանսարկութիւններուն եւ վարկաբեկման արշաւներուն նկատմամբ, նոյնքան հաստաբուն կաղնիի պէս աներեր կանգնեցաւ ամէն կարգի յոր–ձանքներու դէմ ու անխախտ հաւատքով փարեցաւ Կի–լիկեան Ս. Աթոռի անկախութեան արժանաւորապէս տէր կանգնելու իր կոչումին եւ առաքելութեան։

Զարեհ Առաջին կրցաւ դիմադրել ամէն կողմէ իր վեհութեան եւ Կիլիկեան Ս. Աթոռի արժանաւորութեան դէմ ուղղուած ցեխարձակումներուն, որովհետեւ իր շուրջ համախմբուած տեսաւ խիտ շարքերը առաջին հերթին նոյնինքն մեր ժողովուրդին։ Ապա՝ շարունակ իր կողքին ունեցաւ հաւատաւոր ու ջերմեռանդ փա–ղանգը միաբանութեան իր հոգեւոր եղբայրներուն, որոնք ամբողջական հաւատարմութեամբ եւ զօրակցու–թեան ոգիով ամրապնդեցին իրենց արժանաւոր վեհա–փառին կամքն ու մարտունակութիւնը՝ ձախողութեան մատնելու համար Կիլիկեան Աթոռի միաբանութեան պառակտումին հետամուտ բոլոր գրգռութիւնները։

Զարեհ Առաջին եւ Կիլիկեան Աթոռին շուրջ մի–ախմբուած միաբանները իրենց բախտին չլքուեցան եր–բեք։ Կիլիկեան Սուրբ Աթոռին անկախութիւնը պահ–պանելու եւ արմատաւորելու դրօշով ու սփիւռքի հա–յութեան ազգային–քաղաքական ինքնուրոյնութիւնը խորհրդային սպառնալիքին դէմ պաշտպանելու վճռա–կամութեամբ, պայքարի դաշտ նետուեցան, ազգային գաղափարապաշտութեամբ տողորդուած, ողջ արտաշ–խարհի հայ մտաւորականութիւնն ու երիտասարդու–թիւնը։

Դաշնակցութիւնը բարձրահասակ ու բաց ճակա–տով փութաց պաշտպան կանգնելու Կիլիկեան Ս. Աթո–ռին եւ այդպէ՛ս ձախողութեան մատնուեցաւ խորհր–դային սադրանքը։ Զարեհ Առաջինի կաթողիկոս ընտ–րութեամբ, Կիլիկեան Ս. Աթոռը ոչ միայն նուաճեց Հայ Առաքելական եկեղեցւոյ անկախութեան իրաւունքը եւ անփառունակ պարտութեան մատնեց խորհրդային ոտնձգութիւնները, այլեւ սփիւռքի հայութեան տուաւ հոգեւոր միասնութեան հոգեպարար կեդրոն մը, որ ահա տասնա–մեակներէ ի վեր արժանաւորապէս կ’արտայայ–տէ սփիւռքի ձայնը թէ՛ համահայկական եւ թէ՛ համաշ–խարհային բարձրագոյն բեմերէն։



ՈՒԽՏԻՆ ՏԱՊԱՆԱԿԸ

Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Միսէ Անթիլիաս Փոխադրութիւնը

ԱՌԱՋԻՆ ՀՆ ԳԱՄԵԱՆ
2

Իբրեւ ջրում քննադատութեան յայտարարուած է. «Սահակ Կաթողիկոս ինչ որ ըրած է առաջին հնգամեայի մի-ջոցին՝ գովեստի արժանի է քան քննա-դատութեան»²⁷⁸:

Ըստ թղթակցութեան մը, Կաթողի-կոսը հազիւ Աթոռը հասած՝ աշխատանքի մէջ դադար չէ ունեցած: Պաշտօնական այցելութիւններ ստանալէ եւ փոխանա-կելէ յետոյ՝ անմիջապէս գործի է անցած: Նոյնիսկ յաջորդ օրը (19 Մարտ 1903) միաբանութիւնը Վեհարան հրաւիրած է, եւ առաջնահերթ նիւթերէն մէկը դար-ձուցած Մայրավանքին ելեւմուտը: Հաստատած է տարեհաշիւ մը, կամ թղթակցութեան բառով՝ ելմտացոյց մը (budget), որ տարեկան գրեթէ 500 օս-մանեան ոսկիի ելք մը նախատեսած է²⁷⁹: Դժբախտաբար, չէ գրուած, թէ ի՞նչ մուտք նախատեսած է ան:

Ի՞նչ գիտենք Մայրավանքի եկա-մուտին վրայ:

1903-ի ծանօթ Տեղեկագրին 6-րդ եւ 7-րդ գլուխներուն մէջ կը գտնենք Մայրավանքի կալուածներէն եւ թեմերէն հասոյթներուն թիւերը²⁸⁰:

Կալուածներէն գրեթէ բոլորը կա՛մ խեղճ ինչքեր էին, եւ կամ ալ՝ գրեթէ անմշակ հողեր: Կալուածները Սիսի եւ Մարաշի մէջ էին, բացի Թլանի ագարա-կէն, որ Սիսէն 3 կամ 3 ^{1/2} ժամ հեռու էր:

Մարաշի կալուածներուն միւթէ-վէլլին էր Մկրտիչ Կաթողիկոսը: Անոնք թէեւ տարին 6000-էն 8000 զուրուշ եկամուտ կը բերեն եղբր, սակայն այն գումարէն տարին 500-էն 1000 դրշ. հա-զիւ մտած է Մայրավանքին գանձանա-կը²⁸¹: Մայրավանքին «ամենամեծ ցաւ մը» եղած են օր ըստ օրէ բուսած «ժա-ռանգորդ»ներ, որոնք «կարգ մը կալ-ուածներ»ու տիրանալու համար, Կաթո-ղիկոսարանը 15 տարի զբաղ պիտի պա-հէին՝ դատական խնդրի մէջ ներքաշելով զայն, որ ահազին զոհողութիւններ պիտի ընէր: Եւ վերջապէս կարելի պիտի ըլլար համաձայնութեան մը գալ՝ 300 օսման-եան ոսկի վճարելով անոնց²⁸²: «Սահակ Կաթողիկոս իր անուան փոխանցել տուաւ այդ կալուածները եւ վերածեց վագրֆի»²⁸³, ապագային նմանօրինակ անպատեհութիւններու առաջքն առնե-լու համար»²⁸⁴, գրած է Միսաք Քէլէշ-եան:

Սիսի կալուածներէն ընդհանուր եկամուտը 16,336 ^{1/2} դրշ. էր: Թլանի ագարակէ՞ն: Անոր մասին անջատ յօդ-ուած մը՝ յաջորդիւ:

Թեմերէն հասոյթը:

Տեղեկագրի 7-րդ գլխուն սկիզբը կը կարդանք. «Վիճակային հասոյթից որակին եւ քանակին վրայ բան գիտցող չկայ վանքին մէջ, որովհետեւ վիճակնե-րը Կաթողիկոսին (ակնարկութիւն՝ Մկրտիչ Քէֆաղիեանի — ԳՔ) մահէն յե-տոյ, իրենց պարտաւորութիւնը առ Սուրբ Աթոռն բոլորովին զլացած են. միայն ի պատիւ Ատանացւոց պէտք է

խոստովանիլ, որ իբրեւ ամենէն մերձա-ւոր վիճակը Աթոռին, աթոռայնոց ցաւե-րը հոգալէն կամ քաշելէն զատ՝ տարին 1500-էն 2500 զուրուշ աթոռահաս իրա-ւունք տուած են»²⁸⁵:

Տեղեկագրին օգտագործած ցուցա-կին մէջ, թեմերէն Մայրավանքին գան-ձանակ մուտքերը գրեթէ անորոշութիւն-ներ են: Երեք օրինակներ. 1) Սիսի թեմէն. «Կոյս ընդ կուսի պսակէն 5 զուրուշ, նշանտուքէն՝ 5, երկրորդ եւ երրորդ պսակներէն, նոյնպէս այր ընդ կուսի պսակներէն, կոյս ընդ այրւոյ՝ 10-20 զուրուշ: Տէրունի ըսուած ծուխերուն արդիւնքը: Պօղոս, Պետրոս եւ Ս. Մինաս մատուռներուն գանձանակադրամը Աթոռինն են եղեր»²⁸⁶: 2) Անտիօքի թե-մէն. «տարեկան 1500-էն 3000 Ս. Միււ-ռոնի ամէն օրհնութեան ատեն նուիրակ կը ղրկուի, քաղաքի եւ գիւղօրէից եկե-ղեցեաց գանձանակներ, Եազուպիէյի եւ Ղընիէյի վանքի ձիթաստաններուն ար-դիւնքը»²⁸⁷: Պուլանըգի թեմէն. «Կոյս ընդ կուսի, կամ կոյս ընդ այրւոյ՝ 5 զու-րուշ: Ամէն տարի երկրագործերէն պտղի, Ս. Միււռոնօրհնութեան տարիները նուի-րակութիւն (հասկնալ՝ նուիրակութեան տուրք — ԳՔ)²⁸⁸:

Եթէ թեմերէն Մայրավանքին գանձանակը մտած յստակ գումարները հաշուուին, ապա անոնց ընդհանուրը 9500-էն 15,000 զուրուշի միջեւ եղեր է²⁸⁹: Իսկ այլեւայլ պարտաւորութիւննե-րէ եկածներն ալ կարելի՞ է ենթադրել 15,000-էն 20,000 զուրուշի չուրջ...

Այսպիսով՝ Մայրավանքին պաշ-տօնական եկամուտը 6000-էն 8000 զուրուշ + 16,336 ^{1/2} զուրուշ + 9500-էն 15,000 զուրուշ + 15,000-էն 20,000 զուրուշ եղեր է:

Ուրեմն, Կաթողիկոսին հաստատած տարեհաշիւը տարեկան գրեթէ 500 օս-մանեան ոսկիի ելք մը նախատեսած էր, որովհետեւ մուտքն ալ անկէ շատ բարձր չէր տեսած: Մանաւանդ որ Մարաշի կալուածներէն եկածը՝ պաշտօնական գումարին 6.25%-էն 12.5%-ն էր կամ 8.33 %-էն 16.66% -ը:

Գիտենք որ Սահակ Կաթողիկոս Կ. Պոլիս իր այցելութեան առիթով ունեցած էր նուիրատուութեանց խոստումներ, որոնք հաւաքուած էին²⁹⁰ եւ ի պահ դրուած Պատրիարքարանի Քաղաքական ժողովին անդամ եւ «ծանօթ դրամատէր» ոմն էֆէնտիի մը մօտ²⁹¹: Հաւաքուածնե-րը ետքը Կաթողիկոսի աղերսախառն պահանջներուն հետ՝ մաս առ մաս պի-տի փոխանցուէին Կիլիկիոյ Աթոռին:

Կանոնաւոր եկամուտ մըն էր Կա-րապետ վրդ. Շահնազարեանի կտակէն դպրանոցին փոխանցուող 60 օսմանեան ոսկին²⁹²:

Մայրավանքին բազմակողմանի պէտքերն ու պահանջքները երբեք ալ պիտի չծածկուէին:

Կաթողիկոսը 1908-ին պիտի ար-ձանագրէր, թէ նիւթական ու բարոյա-կան ծանր պատասխանատուութիւնը զինք կը ճզմէր²⁹³:

«Կիլիկեան Կսկիծներ» գիրքի 1908-ական մէկ նամակէն կը տեղեկա-նանք, թէ Մայրավանքին հաշիւները հրատարակուած են²⁹⁴, սակայն ցարդ կա-րելի չէ եղած գտնել 1904-էն 1907-ի ելմտացոյցներէն որեւէ մէկուն հրատա-րակութիւնը: Յուսալի՞ է, որ Սահակ Կա-թողիկոսի արխիւին մէջ պահուած են, կամ ուրիշ տեղ մը գտանելի՞ են...

ԳԱՌՆԻԿ Աւ. Ք. Գ.

ԱՂԲԻԻՐՆԵՐ Եւ ԾԱՆՕԹԱԳ-ՐՈՒԹԻՒՆՆԵՐ

278.- ԿՊԿ, u 859:

279.- Գ. Արոյեան, Հայ Եկեղեցի/Տ. Սահակ Ս. Կաթողիկոսը/Դլան Ագա-րակին Գործը, ԲՆ, 23 Ապրիլ, 1903, է 1:

280.- ԿԿ, էէ 24-28, Գաեւ ԿՊԿ, սս 872-876:

281.-Թէ՛ ԿԿ-ի եւ քէ՛ ԿՊԿ-ի մէջ այսպէս գրուած է. «Քէպետեւ տարին 6-8000 դրշ. եկամուտ կը բերեն, յորմէ հաքիւք տաքին վանքին հասած է 500-1000 դրշ. եւայլն»: Մայրավանքը ար-խիւներ չուներ. Կաթողիկոսը ինչպէ՞ս գիտնար, քէ հաքիւք տարուայ մէջ ի՞նչ մուտք ունեցած էր անիկա, եւ դեռ՝ ստոյգ 500-1000 դրշ.: Նոյնիսկ ճիշդ ալ չէ «հաքիւք տարին վանքին հասած է»ն հասկնալ՝ «հաքիւք տարուայ մէջ» վանքին հասած է իմաստով: Արդ, ճիշ-դը «հագիւ տաքին վանքին հասած է» նախադասութիւնն է:

282.- Մկրտիչ Կաթողիկոսի «ժառանգորդ»ներէ յարուցուած այլ խնդիր մըն էր Հալէպի Սրբոց Քառաս-նից Մանկանց եկեղեցւոյ հողերուն դատը: Պատմագիր Կաթողիկոսը գրած է. «Քէֆսիգեանի մահէն յետոյ՝ ժա-ռանգորդ անուան տակ խաչագողներ բուսան, իրենց ազգականին ժառանգը պահանջեցին, նոյնիսկ ձեռք երկնցնել ուզեցին Հալէպի Սրբոց Քառասնից Մանկանց եկեղեցւոյ հողերու, որոնք իբրեւ միւթէվէլլի՝ Մկրտիչ Կաթողիկո-սի անուան էին արձանագրուած, եւ դատ բացին: Այս դատը երկարեցաւ մինչեւ Սահակ Բ. Կաթողիկոսի օրերը, եւ որպէսզի թիւրք դատարանը, գիտ-նալով հանդերձ քէ այդ հողերը Հալէ-պի Սրբոց Քառասնից Մանկանց եկե-ղեցւոյն կը պատկանին եւ ոչ քէ միււ-թէվէլլիի անձին, ի նպաստ ժառագորդ-ներուն վնիո չարձակէ, Ատանայի Կու-սակալ ձէմալ Փաշայի խորհրդով Սա-հակ Կաթողիկոս 500 օսմանեան ոսկի տուաւ Քէֆսիգեանի ժառանգորդնե-րուն, որոնք ետ փաշեցին իրենց դատը, եւ հողերը արձանագրուեցան Սահակ Կաթողիկոսի անուան, իբրեւ նոր միւ-թէվէլլի», ԿՊԿ, u 722:

283.- Փաստաբան Արմենակ Ին-ճէեան Օսմանեան Հողային Օրէնսդ-րութեան ու Գաեւ յատուկ սեւեռումով մը՝ Վագրֆի օրէնքներուն վրայ յօդ-ուածներ գրած է 1905-ի «Բիւզանդի-

ոն»ին մէջ:

Վագրֆի մասին՝ իր բացատրա-կանէն. «Օսմանեան Օրէնսդրութեան յատուկ եւ անոր գլխաւորագոյն ճիւղե-րէն մէկն է վագրֆի հաստատութիւնը. անիկա ծնունդ առած է ողորմութեան գաղափարէն...Իսլամը չէ ուզած ներկայ ու անմիջական ողորմութեամբ միայն գոհանալ, այլ ուզած է յաւիտեակա-նացնել զայն, անանկ մ'ընել, որ շա-րունակական ըլլայ անիկա. այս նպա-տակին հասած է վագրֆի դրութեամբ:

Վագրֆ համանիշ է հապսի. վա-գրֆ կը նշանակէ ուրեմն, կեցնել, ար-գիլել (թէֆգրֆ). մերկ-սեփականու-թեան իրաւունքն է որ կ'արգիլուի, կը կասեցուի. այդ իրաւունքն այլեւս մէ-կու մը չի կրնար վերաբերիլ. կ' են-թադրուի որ անիկա Բարձրելոյն Աս-տուծոյ կը պատկանի:

Մերկ-սեփականութիւնն այսպէս Աստուծոյ վերագրուած ինչքի մը ար-դիւնաբերութիւնը կրնայ յաւիտեանս յաւիտենից բարեգործական նպատակ-ներու (հիւանդանոց, որբանոց, անկե-լանոց, դպրոց, եկեղեցի, աղճատի, աղ-ճատախնամ, ուղիներու շինութեան եւայլն եւայլն) յատկացուիլ: Բան մը վագրֆ ընել՝ կը նշանակէ ուրեմն՝ անոր մերկ-սեփականութիւնն Աստու-ծոյ նուիրելով՝ անհատներու միջեւ փոխանցումն (transfert) արգիլել եւ ար-դիւնաբերութիւնը ցմիշտ բարեգոր-ծութեանց յատկացնել», Արմենակ Ին-ճէեան, Ի՞նչ է Վագրֆի Հաստատու-թիւնը, Ա., ԲՆ, 23 Յուլիս, 1905, է 1:

284.- ՔՍՄ, է 250:

285.- ԿԿ, է 27, Գաեւ ԿՊԿ, u 875:

286.- Անդ եւ անդ:

287.- Ն, է 28, եւ ն, u 876:

288.- Անդ եւ անդ:

289.- Քրոնիկ Հայ Եկեղեցւոյ/Կիլիկիոյ Աթոռին Գործերը, ԲՆ, 30 Նոյեմբեր, 1906, է 3: Նաեւ՝ «Տանկա-հայք», Արարատ, Յունուար, 1907, է 58:

290.- Հանգականակուածը 2000 օ. ո. էր, ՔՍՄ, է 277: Նաեւ Բիւզանդ Քէչեան, Խմբագրական/Հայ Եկեղեցին 1905-ին/Կիլիկիոյ Աթոռը, 31 Դեկ-տեմբեր, 1905, է 1:

291.- ԿԿ, է 67:

292.- Սահակ Կաթողիկոսի 28

Ապրիլ 1913 թուակիր մէկ նամակին ներքեւ ծանօթագրութիւն մը ըսած է. «Հոգելոյս Շահնագարեանի կտակի տոկոսէն տարեկան վաթսուն (60) լիրա օսմանեան 1899 թուականէն ի վեր կը վճարուի Կաթողիկոսարանին ի նպաստ Մայրավանուց մէջ հաստատուած դպրանոցին: Օրմանեան եւ Դուրեան սրբազաններու Պատրիարքութեան շրջաններուն կանոնաւորապէս շարու-նակուած են վճարումները: Այնուեե-տեւ սկսած են զլացումները, սակայն հակառակ շարունակական դիմումնե-րու միշտ պահանջք մնացած է», ԿԿ, է 109:

293.- Ն, է 77:

294.- Ն, է 70:





STUDENT WORKS
PAINTING
ESTABLISHED IN 1981

Let us paint your house for you this summer!

- INTERIOR & EXTERIOR PAINTING
- 3 YEAR WRITTEN GUARANTEE
- \$5M LIABILITY INSURANCE
- FULL CNESST COVERAGE
- CONCIENTIOUS TRAINED STUDENTS
- TOP QUALITY PAINTS, PRIMERS & STAINS

Nelly Ohannessian
Owner/Operator

m: 514-726-4951
e: nelly.ohannessian@gmail.com
w: peinturesetudiants.ca

Call me today for a FREE estimate!



Ascenseur **Adams** Elevator

Services Inc.

PO Box 30, St-Laurent, Qc. H4L 4V4

RBQ# 1812-6474-22

www.adamselevator.ca

TEL: 514-745-4455 - FAX: 514-745-6613

*RENOVATION, REPAIRS, MAINTENANCE,
INSTALLATION OF ELEVATORS.*

Eddie, Pedro, Joyce Oughourlian

Linda KHARABOYAN, LL.B, D.D.N Notaire et conseillère juridique  <i>Consultation personnalisée à domicile Տուներու այցելութիւն ըստ փափաքի</i> Testament Mandat Procuration Financement Immobilier Attestations 1430, boulevard Saint-Martin O., Laval (Québec) H7S 1M9 T. 514.883.3498 F. 450.328.1258 E. linda@chezenotaire.ca	VIZUALIS optométriste DR SHANT DONABEDIAN Centre d'Achat Fairview - Fairview Mall Pointe Claire 514 695 2555 - VIZUALIS.CA	PHOTO Cristal (514) 744 4313  Berj Merdjanian Mariage - Portrait - Graduation Restauration - Commercial - Passeport Publicité - Lamination - Encadrement Video - Reproduction 647 Boul. Decarie VSL Montreal QC H4L 3L3 photocristal@hotmail.com www.photocristal.com
 Assura Bien inc. Cabinet en assurance de dommages et de services financiers Ապահովագրական գրասենյակ KRIKOR ABRAKIAN VAHAN MATOSSIAN 970 Montée de Liesse, suite 306, Saint-Laurent, Qc, H4T 1W7 T: 514.903.3999	RITA BAGHDASSARIAN Conseillère en Sécurité Financière Revenu Garantie Viager COMPTE D'ÉPARGNE LIBRE D'IMPÔT (CELI) • CRÉATION D'HÉRITAGE • REER, FERR, RENTE RETRAITE • PLAN D'ÉDUCATION-REÉÉ • ASSURANCE-VIE & HYPOTHÉCAIRE • ASSURANCE SALAIRE & COLLECTIVE • ASSURANCE DE PARTENARIAT 3820, boul. Lévesque Ouest, Bureau 101, Laval Qc. H7V 1E8 Tél.: (450) 973-2822 • (514) 884-1117 • Fax: (450) 973-2262 ritabagh@yahoo.com	 Montréal RÉSIDENTS DE BORDEAUX-CARTIERVILLE : VENEZ ME RENCONTRER !  Harout Chitilian Conseiller de la Ville Vice-président du Comité Exécutif Je vous invite à venir échanger avec moi d'enjeux locaux qui vous tiennent à cœur. POUR PRENDRE RENDEZ-VOUS : 514 872-8993 harout.chitilian@ville.montreal.qc.ca
 RE/MAX RE/MAX 3000 inc. Agence Immobilière Elie Berberian Courtier immobilier / Real Estate Broker C 514.519.3543 B 514.333.3000	 ONGLES CAROLE HAMPARTSOUMIAN POSE D'ONGLES RÉSINE ET POUDRE MANICURE & PÉDICURE AVEC GEL RECouvreMENT SUR ONGLES NATURELS Առողջ եղունգներու խնամքի համար հեռաձայնե՛ք 514 941-0014 LAVAL	KRIKOR MAROUNIAN RLU Independent Financial Security Broker Life Insurance • Disability & Critical Illness Insurance Group Insurance • Pension Plans Travel/Visitor Medical Insurance 11820 General Giraud Montreal, QC H4J 2H6 Res: (514) 332-7021 Fax: (514) 332-7376 Cell: (514) 927-2666 krikormar@gmail.com
FIVE STAR ELECTRIQUE CINQ ÉTOILES SPECIALIST IN DECORATIVE GARDEN LIGHTING RESIDENTIAL-COMMERCIAL BEDROS NALPATIAN 442, LA RIVIÈRE, LAVAL, QC. TEL: 514 - 497- 5155 FAX: 450 - 689- 3997 E-MAIL: ELECTRIC.FIVESTAR@GMAIL.COM	 SOSIE DERNERSESSIAN MORTGAGE AGENT LICENCE #M12001830 716 Gordon Baker Road, Unit 204A, Toronto Ontario M2H 3B4 CENTUM™ Metrowest Wealth Solutions Inc. License # 12147 Mortgage programs for new comers to Canada New purchases Refinancing Second mortgages Self employed Low credit score Access to top lenders including private lenders 416.662.6650 cell centum.ca/sosie_demersesian	 Aline Bekerejian Notaire - Notary Նոտար եւ Իրաւաբանական Խորհրդատու՝ Ալին Դեքերեճեան 180, rue Fleury O., Montréal, Québec, H3L 1T5 T: 514.382.7222 F: 514.381.1818 aline.bekerejian@notarius.net

ԳՐԱԻՌԻԱԾ ԹՈՒԱԿԱՆ

ՀՄԸՄ ԼԱԻԱԼ
Շարաք, 11 Մարտ 2017
Texas Holdem

ԽՆԴԱԿՑՈՒԹԻՒՆ

ՀՅԴ Գանատայի Պատանեկան Միութեան Ընդհանուր Վարիչ Մարմինը խնդակցութիւն կը յայտնէ ընկ. եւ ընկե. Վիգէն եւ Անի Ապրաքեաններուն, տղայ զաւակով մը քախտաւորուելնուն առիթով:

ՑԱԻԱԿՑԱԿԱՆ

ՀՕՄ-ի Գանատայի Շրջանային վարչութիւնը ցաւակցութիւն կը յայտնէ Մոնթրէալի «Սօսէ» մասնագիւղի ատենապետ ընկի. Լիւսի Շահինեանին իր հօր՝ ողբ. ՊԵՏՐՈՍ ՄԱՆԿԵԱՆի մահուան առիթով:

ԺՈՂՈՎ

ՀՄԸՄ ԼԱԻԱԼ-ի Տարեկան ընդհանուր ժողովը տեղի պիտի ունենայ Ա-Հինգշաբթի, 20 Ապրիլ 2017 եւ Բ- Հինգշաբթի, 11 Մայիս 2017:

ԱՇԽԱՐՀ... Սկիզբը էջ 9

գակիցներուն հետ հայերէն չըլլան: Հակառակ պարագային, եթէ դիմացինը հայերէն չի կարդար, մեր սարքերուն վրայ կայ նաեւ թարգմանելու (translate) յարմարանքը..., որ սակայն տակաւին կատարելագործման կը սպասէ:
Օ՛ն ուրեմն, հայերէն հաղորդակցինք, հայերէն գրենք նաեւ այս նոր աշ-խարհին մէջ...

ՎՐԷԺ-ԱՐՄԷՆ
(շար. 2 եւ վերջ)

Ծանօթ. հեղինակի— Այստեղ գործածուած օտար բառերու հայերէն համա-գօրներուն մէկ կարեւոր մասը չեն հնարուած կամ առաջագրուած հեղինակին կողմէ, այլ արդէն իսկ գոյութիւն ունին, շատեր բառարանագրուած են (տեսնել անգլերէն-հայերէն կամ ֆրանսերէն հայերէն հայաստանեան ընդարձակ նոր բառարանները) եւ յատկապէս կ’երեւին հայրենի մամուլին մէջ ու gmail-ի հայերէն տարբերակին վրայ: Այդ վերջինը կարելի է ընտրել ձեր հաշուին մէջ: Եթէ այստեղ նշուած բառերուն հա-մար տարբեր համագօրներ, կամ այս համացանցային կամ այլ արդի ոլորտներու մէջ օգտագործելի նոր բառեր ունիք կամ կը գտնէք, կը խնդրեմ որ հաղորդէք ինծի հե-տեւեալ ել-հասցէով.
vrejarmen@hotmail.com



Այցելեցե՛ք Թորոնթոյի ամենօրեայ վարժարանի բարեկորդուած կայքէջը՝ / Visit our new website
www.arsarmenianschool.ca

ԾԱՆՈՒՑՈՂՆԵՐՈՒ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

«ՀՈՐԻԶՈՆ» որեւէ ձեւով եւ որեւէ ժամանակ պատասխանատու չէ լոյս տեսած ծանուցումներու բովանդակութեան:
«ՀՈՐԻԶՈՆ» իրաւունք ունի ընդունելու կամ մերժելու որեւէ ծանուցում կամ յայտարարութիւն:
ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐԸ Կ’ընդունինք միայն գրաւոր, որոնք խմբագրութեան պէտք է յղուին թերթի լոյս ընծայման ժամկէտէն առնուազն 7 օր առաջ:

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԷ

«Հորիզոն»ի յղուած թղթակցութիւններն ու յօդուածները պէտք է գրուած ըլլան ընթերցելի ձեւագիրով, նախընտրաբար մեքենագրուած կամ ք-մատկի մեր հաս-ցէին յղուած: Անստորագիր եւ առանց հասցէի գրութիւնները նկատի չեն առնուիր: Խմբագրութեան յանձնուած նիւթերը հրապարակուին կամ ոչ, չեն վերա-դարձուիր:
Հրատարակուած յօդուածներու մէջ տեղ գտած կարծիքները անպայմա-նօրէն չեն ներկայացնել խմբագրութեան տեսակետը:
Ցապաղած թղթակցութիւնները չեն հրատարակուիր:
Բոլոր թղթակցութիւնները ենթակայ են խմբագրման եւ վերամշակման:
Ստացուած յօդուածներն ու թղթակցութիւնները հրատարակելու կամ չհրատարակելու որոշումը վերապահուած է խմբագրութեան:

horiZon

H O R I Z O N
Hebdomadaire arménien
Armenian Weekly
Publié par / Published by
Les Publications Arméniennes
(1991)
3401, Olivar-Asselin
Montréal, Québec
Canada H4J 1L5

Abonnement annuel /
Yearly subscription
Canada
2^e classe - 2nd class: \$80
plus applicable taxes
1^{re} classe - 1st class: \$95
États-Unis / USA
1^{re} classe - 1st class: \$95 US
Ailleurs / Elsewhere
1^{re} classe - 1st class: \$125 US

Թորոնթոյի
Ներկայացուցիչներ՝

Administration / Publicité
Sylva Ehramdjian-Bachekjian
(General Manager)
Tél.: (514) 332-3757
Télécopieur/Fax (514) 332-4870
E-Mail: sylvla@horizonweekly.ca
Courrier de deuxième classe
/No. 40065294 / Second class mail
Dépôt légal: bibliothèques nationales
du Québec et du Canada - ISSN 0708580X

Գրիգոր Հոբոյեան, (416) 494-1921
Ժազ Վարպետեան, (416) 722-9225

Վարիչ Խմբագիր՝
Վահագն Գարազաշեան
Վարչական պատասխանատու՝
Սիլվա Պաշեգճեան
Քարտուղար՝ Մարինա
Տէր Խաչատուրեան
Աագ Խմբագիր՝
Վրէժ-Արմէն Արքիմեան
Անգլերէն/Ֆրանսերէն՝ Վիգէն Արքա-
համեան, Թինա Սիլահեան
Չեւատրում՝ Նէմսի Կիրակոսեան
Սրբագրիչ՝ Սոնիա Աճէմեան
Սոնա Թիթիզեան-Կէտիկեան

Լուսանկարիչներ՝ Արմէն Ալեմեան, Մայք Թաշճեան, Իշխան Ղազարեան, Գալուստ Պապեան, Վազգէն Տէկիմէնթաշ,

ՄՐՆԹՐԷԱԼ

Համագգային «Մուշեղ Իշխան» գրադարան - ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ - Գրադարանիս մօտ կը գտնուին շատ լաւ վիճակի մէջ գործածուած ծախու գիրք, օրինակ՝ կրօնական, ճարտարարուեստի յատուկ, պատմական, հայա-գիտական, եւլյն \$2.00-\$10.00-ի միջեւ: Հետաքրքրուողները կրնան այցելել երեքշաբթի եւ հինգշաբթի օրերը կ.ե. Ժամը 1:00-4:00 իսկ կիրակի օրերը առաւօտեան Ժամը 11:00-էն կ.ե. Ժամը 2:00: Գրադարանի անձնակազմ:
Համագգային «Սանահին» մասնագիւղի 2017-ի գլխաւոր ձեռնարկներ.-
- Այցելութիւն Chagall: Couleur et Musique Musée des Beaux Arts de Montréal՝ Մարտ 17, 2017 (10am-2pm) (Այս մասին հեռաձայնել կամ գրել ընկի. Տիրուկ Մաննիկեանին 514-339-1257, diroug@gmail.com
- Հապուրեան վեցեակի սենեկային երաժշտութեան համերգ՝ Ապրիլ 02, 2017
- Վահրամ Շամբեսեանի գրքի շնորհահանդէս՝ Ապրիլ 20, 2017
- Mea Culpa 2, Հայաստանէն թատրոն՝ Մայիս 12, 13, 2017
- Անի Ազգագրական պարախումբի անդրանիկ ելոյթ՝ Ցունիս 4, 2017
- Սիրուշոյի համերգ՝ Ցուլիս 7, 2017
- Noa’s Ark Նկարչական ցուցահանդէս՝ Սեպտեմբեր 8-10, 2017
- The Glass Menagerie, Պետրոս Աղամեան թատերախումբ՝ Սեպտեմբեր 16-17, 2017
- Անի պարախումբի «Գայեանէ» ելոյթ՝ Հոկտեմբեր 14-15, 2017
- ՔՆԱՐ երգչախումբի տարեկան ելոյթ՝ Նոյեմբեր 19, 2017
- ՆԱՆՈՐ երգչախումբի տարեկան ելոյթ՝ Դեկտեմբեր 10, 2017



ՀՕՄ-ի Սոնթրէալի ընկերային ծառայութեան գրասենեակը կ’աջակցի Գանատա ներգաղթած սուրիահայերուն

ՀՕՄ-ի Սոնթրէալի Ընկերային ծառայութեան գրասենեակի հիմնական առաքելութիւնը Մեծն Սոնթրէալի հայութեան ընկերային կարիքներուն հասնիլն է, շեշտը դնելով կարիքաւոր անհատներու եւ ընտանիքներու վրայ: Իսկ վերջին շրջանին մեծ աշխատանք կը տարուի Գանատա նորահաստատ սուրիահայ ընտանիքներուն օգտակար հանդիսանալու համար: Մեր գործունեութիւնը կ’ընդգրկէ տեղեկատուութիւն, ներգաղթողներու աջակցութիւն, տարեցներու եւ կարիքաւորներու օժանդակութիւն.
- Կ’օգնենք դիւրացնելու անոնց համարկումը (intégration) եւ երկրի օրէնքներուն, սովորութիւններուն եւ քաղաքացիական իրաւունքներուն ու պարտաւորութիւններուն ծանօթացումը:
- Կ’ամբողջացնենք կառավարական փաստաթուղթերը դաշնակցային եւ նահանգային մակարդակներու վրայ: Allocation familiale, crédit d’impôt pour les nouveaux arrivants:
- Նորեկները կ’արձանագրենք ֆրանսերէնի դասընթացքներու:
- Կ’ընկերակցինք զանազան ժամադրութիւններու եւ կը միջամտենք աշխատանք գտնելու կապակցութեամբ:
- Նոր ժամանած եւ տակաւին նոր հաստատուող ընտանիքներուն կը տրամադրենք խոհանոցային իրեր:
- La Corbeille զանատական բարեսիրական կազմակերպութեան հետ յատուկ համաձայնութեամբ զեղչուած գիներով ուտեստդէն կ’ապահովենք կարիքաւոր ընտանիքներուն:

Հինգշաբթի օրերը Ժամը 12:00Էն - 4:00
Հասցէ՝ 3401 Olivar Asselin, Montreal, Qc H4J 1L5
Հեռաձայն՝ 514 514-335-2222

SUDOKU - ՍՈՒՏՈՔՈՒ

Աստիճանաւորում՝
միջին

					1	4		
	8			3		5		
					5		2	7
			6	1		9		3
7		9			8		5	
1					7			
8	5			6				
		7					9	
		2	4	7				

Financé par le
gouvernement
du Canada

Funded by the
Government
of Canada

Canada

ԱՍՏՂԱԳՈՒԾԱԿ

Կոնցերտի ժամանակ Մարտին Լյութերը և Ջորջ Բենեթը 16-րդ դարի Երկրորդ Ռեֆորմի ժամանակահատվածում:

ԽՈՅ (21 Մարտեն 20 Ապրիլ) -Չօրաւոր յուզումներ պիտի ունենաք այս շաբաթ։ Դաւանաբար օդի փոփոխութիւնն է, որ կ’ազդէ ձեր տրամադրութեան վրայ։ Շատ մի’ պրպտք յուզումին պատճառները, որովհետեւ մասնաւոր առիթ մը չուկիք։ Պարզապէս տարին քակի մը անգամ այսպիսի ապրումներ կ’ունենաք։

ՅՈՒԼ (21 Ապրիլէն 21 Մայիս) -Խանդավառ եւ աշխոյժ ըլլալու էք, որպէսզի կարենաք շուտով դժուարութիւնները հարթել։ Երկար մի’ մտածեք, այլ գործի անցէք։ Վճռակա՝ մութեամբ եւ յարատեւութեամբ առաջ կ’երթայ մարդ։ Նպաստաւոր շաբաթ մըն է, օգտագործեցէք բոլոր պատեհ առիթները։

ԵՐԿՈՒՌՐԵԱԿ (22 Մայիսէն 21 Յունիս) - Լոր ծանօթութիւններ եւ գործակիցներ պիտի ունենաք այս շաբաթ։ Ձեր հաճոյասիրութիւնը պիտի գնահատուի անոնց կողմէ։ Վերապահ ըլլալու կարիքը չուկիք, անոնք հետագային պիտի դառնան անկեղծ բարեկամներդ։

ԽԵՑԳԵՏԻՆ (22 Յունիսէն 23 Յուլիս) - Բոլոր պատեհ առիթները այս շաբաթ պիտի ներկայանան, փորձէ առաւելագոյնս օգտագործել զանոնք։ Աստղերը կը թելադրեն, որ այս շաբաթ բախտատոմս մըն ալ գնես, մեծ հաւանականութիւն կայ պատկառելի գումար մը շահելու։

ԱՌԻՒԾ (24 Յուլիսէն 23 Օգոստոս) - Բարեկամական կապ մը պիտի վերածուի սիրային յարաբերութեան։ Անկեղծութեամբ եւ անաչարդութեամբ մօտեցէք այս հարցին, որպէսի յաջողի այս նորաստեղծ կապը։

Լըջութիւն կը պահանջուի ձեզմէ այս շաբաթ բոլոր հարցերուն նկատմամբ։

ԿՈՅՍ (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր) - Ձեր կեանքի մէկ դրուագին վրայէն գիծ մը պիտի քաշէք եւ յառաջ երթաք։ Ճիշդ է ձեր այս որոշումը, մի’ ընկրկիք։ Երբեմն հարկ է մոռացութեան գիրկը նետել անհաճոյ եւ կործանիչ հին դէպքեր, որոնք կրնան խանգարել ձեր տրամադրութիւնն ու երթը։

ԿԾԻՈՔ (24 Սեպտեմբերէն 23 Յոկտեմբեր) - Դիւանագիտութեամբ մօտեցէք կարգ մը հարցերու եւ փորձեցէք կարելի եղածին չափ պարզացնել հարցերը, երբեմն դուք էք, որ կը մեծցնէք եւ կը բարդացնէք մանրմունք հարցեր։ Խոհեմութեամբ վարուեցէք նաեւ ձեր շուրջիներուն հետ։

ԿԱՐԻՃ (24 Յոկտեմբերէն 23 Նոյեմբեր) - Աշխատանքի մէջ լաւ լուրեր ձեզ կը սպասեն։ Այս շաբթուան ընթացքին նորութիւններ պիտի ունենաք։ Պիտի ունենաք նաեւ նիւթական շահեր, հետեւաբար կրնաք արծակուրդի մը ծրագիրը իրագործել ընտանիքի անդամները համախմբելով։

ԱՂԵՂՆԱԽՈՐ (24 Նոյեմբերէն 21 Դեկտեմբեր) - Դանգիստ եւ հանդարտ մնացէք ձեր շուրջը դարձող ըսի ըսաւներուն նկատմամբ։ Դուք կարողութիւնը ունիք հանդարտ մնալու նաեւ հանդարտ պահելու ձեր անմիջական շրջանակը, այս մէկը լաւ առաւելութիւն մըն է։

ԱՅԾԵՂԶԻՐ (22 Դեկտեմբերէն 20 Յունուար) - Ձեր սննդականոնը սերտողութեան կարիքը ունի, վերջերս բոլորովին անտեսած էք ձեր մարմնի առողջութիւնը։ Պէտք է վերատեսութեան եւնթարկէք ձեր ուտելու սովորութիւնները եւ կարգի ու կանոնի մտցնէք զանոնք։

ԾՈՎԱՆՈՅԾ (21 Յունուարէն 19 Փետրուար) - Դաճելի շաբաթ մըն է։ Ձեր աշխատակիցներուն եւ գործընկերներուն հետ բաւական ուրախ ժամանակ կ’անցընէք։ Անոնք կը գնահատեն ձեր կարողութիւնները, մի’ մոռնաք նաեւ փոխադարձել իրենց այս դրական կեցուածքը։

ՁՈՒԿ (20 Փետրուարէն 20 Մարտ) - Լոր ծրագիրներու պէտք ունիք բարելաւելու համար ձեր աշխատանքային վիճակը։ Կարողութիւնը ունիք նորութիւններ ստեղծելու, հետեւաբար մի’ վարանիք գործադրութեան դնելու զանոնք։ Ձերբազատուեցէք հին եւ անհաճոյ յիշատակներէն։

ՀՈՐԻԶՈՒՆ
Առ Ի գնահատանք
ARO TOBACCO 100

ՀԱՄԱԶԳԱՑԻՆ «ՍԱՆԱՀԻՆ» ՄԱՍՆԱՃԻՂԻՆ

Ամանորի նուիրատուներուն ցանկը
Շաբէ Կէօնճեան 1000
Միա եւ Գառնիկ Հացագործեան 100
Արամ եւ Մարի Պէնօճանեան 100
Անի Շահինեան 40
Գրեգոր եւ Մոնիքա Դերձակեան 100

Յակոբ եւ Թամար Փօլատեան 100
Վիզէն եւ Անի Սարգիսեան 50
Միլվարդ Շայն 50
Կարէն Պետրոսեան 40
Սարգիս Դաւիթեան 50
ՋարէՀ եւ Արփի Տօյմաճեան 100
Ռաֆֆի եւ Սոնա Աճեմեան 200
Լիլի Մարգարեան 50
Անահիտ Պալեան 100
Ազնիւ Թորոսեան 100
»Նանոր« Երգչախումբի ծնողներ 120

Յարութիւն եւ Մարալ Պէրպէրեան 50
Պոլսահայ Միութիւն 400
Արա եւ Վարդ Պարթէրեան 100
Մովսիկ Գահվէճեան 50
Էվա Աթայլա 50
Յակոբ եւ Տիրուկ Մանճիկեան 100
Մովսէս եւ Սեդա Պալուզեան 20
Սերժ Եսայեան 100

Վաղգէն Տէր Գալուստեան 100
Արամ եւ Յասմիկ Մանուկեան 100
Լևոն եւ Ֆլոր Պէնկեան 70
Գարեգին եւ Նորա Կիրիւնյան 20
Լևոն եւ Անի Եաղճեան 50
Ալիս Եսայեան 50
Նայիրի Մանուկ 30
Սիմա Մարունեան 20
Մարի-Րօզ Պուլկարեան 100
Րօզ Պաքբալեան 30
Անժել Գրատեան 20
Անի Տիվարչի 20
Ժան եւ Արտեմիս Մկրտիչեան 100
Արսիւն Տադոնվիրեան 50
Միլրուն Ներսէսեան 20
Ատոմ եւ Սեդա Մալխասեան 100
Յակոբ եւ Մովսիկ Կուտեան 100
Գէորդ եւ Անի Թաշճեան 100

ՀԱՄԱԶԳԱՑԻՆ ՄՈՒԵԵԴ ԻԾՈՒՆ ԳՐԱԳԱՐԱՆ ԳԻՐԲ ՆՈՒԻՐԱՄ ԵՆ
Մանսրեճեան Ալիս
Նայիրեան Յակոբ
Գույումճեան Տօքթ. Ռիթա
Մանասիւեան Ժողէֆ
Արթիւնեան Վրէժ-Արմէն
Մարիամ Տօյմաճեանի մահուան քառասունքին առթիւ,
Քէօրդլեան, Տօյմաճեան ընտանիքներ
Համազգայինի գրադարանին կը նուիրեն՝ 100

ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲ ԱՌԱՋԷ. ՄԱՅՐԵՆԵՂԵՑԻՈՑ
Հայկ Պողոսեանի մահուան առթիւ
Սեդա Սուսանեան, ընտք. 50
Տ. եւ Տ. Լիպարիտ Կամսարպաև 25
Էլիզա Ճէմայեան 50
Միլուն Ներսէսեան 20
Վարդգէս Տօրպճեան 50
Հանրի Զալդադ, Նայիրի Տօրպճեան 100
Սոնա Աջանեան 50
Տ. եւ Տ. Գրեգոր Սանտալճեան 50
Էտուրբո, Րօզ Սուսմեան 40
Կարօ Յոխիկեան 150
Վարդգէս Սարաֆեանի 40–ին Յակոբ, Աննա Պուլկարեան 100
Վարուժան Թորիկեանի մահուան (Լիբանան) 40–ին
Գրեգոր, Մարալ Թորիկեան, զւկք. 100
Գառնիկ, Ռիթա Թորիկեան, զւկք. 50
Թորոս, Անի Պապիկեան, զւկք. 100
Շառիկ Թորիկեան, Սարգիս Պոյաճեան, դստերը 60
Տիգրանուհի Պարսամեան 20
Սեդա Տէրտրեան 50
Տ. եւ Տ. Ասատուր Աբրահամեան 30
Մելքոն, Նայիրի Պօղոսեան 30
Վաչէ, Յասմիկ Մելիքեան 50
Տ. եւ Տ. Հրաչ Պոյաճեան, զւկք. 30
Եղուարդ Էլոյեանի 3–րդ տարելիցին
Ազատիկ, Նուշիկ Էլոյեան 100
Լորիս Մալոյեան 40
Թէֆոն Քէօշկէրեան Գերամէթլեանի 10–րդ տարելիցին
Վահէ, Բրիսթին Գերամէթլեան, զւկք. 100
Հերմինէ Արսլանեանի Ա. տարելիցին,
Մուրատեան, Գոճապաշեան զերդաստանաց ննջեցելոց
Վարդգէս, Միլինէ Մուրատեան 50
Թային Մուրատեան, զւկք. 20
Յակոբ, Հուրի Թորոսեան, զւկք. 50
Տօքթ., Տիկ. Ժողէֆ, Տալիսա Սանոսեան, զւկք. 100
Տ. եւ Տ. ձորճ Պոյատեան 50
Տ. եւ Տ. Րաֆֆի Աւագեան 20
Տիրան, Յակոբ Մուրատեաններու Հոգւոց
Տ. եւ Տ. Միհրան Մուրատեան 40
Լուսին Մանուկեան Զուպանեանի Ա. տարելիցին,
նաեւ Յակոբ Զուպանեանի, Մարի Մանուկեանի Հոգւոց
Տ. եւ Տ. Նշան Պապիկեան, զւկք. 50
Ոորէն, Անահիտ Աբրահամեաններու Հոգւոց
Կարպիս, Լինա Աբրահամեան 20
Գրեգոր Սասունեանի Հոգւոյն
Սեդա, Արա, Ալին Սասունեան 30
Կարպիս, Լինա Աբրահամեան 20
Կարօ, Զուարթ Սէֆէրեան 20
Յարութ, Նորա, Արտօ Հացագործեան 20
Վաչէ Տէմիրճեան 25

Պաղտասար Պալեանի եւ Կարօ Տօնապետեանի Հոգւոց
Մարի, Յարութիւն Պալեան, Րաֆֆի, Սալրի Պալեան, զւկք., Յովհաննէս, Էլիզա Տօնապետեան, զւկք.,
Նուպար, Ալտա Մաժուլեան, զւկք., Վահէ, Անի Տօնապետեան, զւկք. 30
Կարապետ, Սիրանուշ Պայրաքտարեաններու,
Սարգիս, Երանուհի Մաժուլեաննեբու Հոգւոց,
նաեւ Մաժուլեան, Պայրաքտարեան զերդաստանաց ննջեցելոց
Նուպար, Ալտա Մաժուլեան, զւկք., Մարի Պալեան, զւկք. 30
Փիլիպոսեան, Սահակեան զերդաստանաց ննջեցելոց
Ազատուհի Փիլիպոսեան 100
Րաֆֆի, Մովկիսար Փիլիպոսեան, դստերը 50
Ատրինէ Պէազճեանի 40–ին
Միլվիա, Բամելիա զւկք.՝ Արամ, Նա–յիրի 50
Յակոբ Էսմոն Տանիլի 16–րդ տարելիցին
Միլվիա, Արամ, Նայիրի 20
Արմէն Դանիէլեանի Հոգւոյն
Մարօ, Յարութ, Անժելա Դանիէլեան,
Երջանիկ, Անահիտ Արապեան 50
Յարութիւն Գըրմըզեանի Հոգւոյն
Սոնա Գըրմըզեան, զւկք. 25

ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՖՈՆՏԻՆ
Արա Տաղէսեանի մահուան առթիւ
Անահիտ Մարգարեան 100
Նուարդ Պաշիւհէլվալանի մահուան առթիւ
Յովիկ, Վերոնիքա Պետիկեան 200
Յակոբ, Աննա Պուլկարեան 200
Մարի-Րօզ Պուլկարեան 100
Վանուհի Իսաջանեան 100
Պետիկ, Սոնիկ Վարձպետեան 100
Զազմաճեան ընտք. 200
Գէորդ, Էրիզա Ուաշատուրեան (ձաբոն) 100
Գէորդ, Նորա Գարբիէլեան 100
Մանուկ, Սոնիա Փիլիկեան 50
Տ. եւ Տ. Եղուարդ Ֆրոնճեան 100
Տ. եւ Տ. Վիզէն Յովսէփեան 50
Արթօ, Վանին Գապասաքալեան 100
Մելթր, Տիկ. Արմենակ Գազանճեան 50
Յարութ, Մարլէն Բարակէօզեան 100
Օթիկ Գրեգորեան (Պոսթոն) 75
Յարութիւն, Հերմինէ Մանուկեան 30
ձազ, Շուշան Սահակեան 50
Տ. եւ Տ. Ալեքս Արապեան 150
Անի Արապեան Սեդրեան 50
Էլիզա Տէմիրճի 100
Ատոմ, Սեդա Մալխասեան 100
Նորայր, Մարօ Շայճեան 50
Լիլի Մարգարեան 100
Տ. եւ Տ. Շանթ Թոպի 50
Յակոբ, Մովկի Կուտեան 30
Ժողէֆ, Մարի Գոդանեան 20
Տ. եւ Տ. Էտուրդ Թիւֆէնկճի 50
Անի Գազանճեան 100
Տ. եւ Տ. Հանրի Սապունճեան 100
Տօքթ. եւ Տիկ. Օհան Թապաբեան 100
Տ. եւ Տ. Րաֆֆի ձաքալեան, ընտք 50
Սարգիս Գուգունեան 50
Փիւռ, Մարալ ձամճիբեան 50
Վիզէն Թիւֆէնկճեան 50
Արեզ, Բրիսթին Մարգարեան 50
Տ. եւ Տ. Մանուէլ Քէօսէեան 40
Տ. եւ Տ. Ռուրէ Աշգարեան 25
Կապի, Սօսի Նաիմ 25
Շահէ Ուաչերեան 20
Արթօ Տէր Մովսէսեան 50
Մարի Պապապեանեան 50
Րաֆֆի, Անիթա Արանեան 60
Գրեգոր, Էլիզա Զաքմաքճեան 30
Յովհաննէս, Յասմիկ Պէքիարեան, զւկք. 50
Տ. եւ Տ. Այզ Պաղտասարեան 100
Վերմին Պուտաբեան Զաքմաքճեան 50
Հուրի Հաքիմեան 25
Շաբէ Կէօնճեան 100
Տօքթ., Տիկ. Վաղարշ Էհրամճեան 100
Գրեգոր Տէր Ղազարեան 50
Փիւռ, Մովիկ Թէրզեան 50
Բժ. եւ Տիկ. Գէորդ Մանուկեան 100
Տ. եւ Տ. Մաչք Գուգունեան 100
Եւա Հայրապետեան 50
Սալրի Մարգարեան 50
Տ. եւ Տ. Վրէժ-Արմէն Արթիւնեան 50
Տ. եւ Տ. Լևոն Եաղճեան 30
Վարդան, Նայիրի Բարախեան 200
Տ. եւ Տ. Վարդգէս Բարախեան 40
Ֆրանքա Օսալա 20
Վահագն, Լուսի Արապեան 50
Մանան Օսթալ 50
Գրեգոր Քիրէմիթճի 50
Արթին Հիլիլի 20
Մինաս, Վերմին Ասատուրեան 30
Արշակ Թորուտադ 25
Պայծառ Գանար 30
Իրմա Գարբիէլ Ֆէրահ 50
Նուրհան Ֆէրա 50
Տ. եւ Տ. Մանուկ Մկրտիչեան 200
Նոյննի Եաղճեան 30
Տ. եւ Տ. Թորոս Պապիկեան 100
Տ. եւ Տ. Նորայր Պէղճեան 40
Կարօ, Անի Կիրապոսեան 40
Տ. եւ Տ. Գէորդ Օհանեան 100
Վահէ, Ռիթա Շէրիբեան, զւկք. 150
Սարգիս, Սիլվարդ Շէրիբեան 50
Ռուրէն, Անահիտ Գույումճեան 100
Ժապիկ Պասմաճեան 100
Ֆրիկ, Աստղիկ Գալինեան 100
Շաթոյեան ընտք. 25
Լիպարեան ընտք. 100
Էմմիեան ընտք. 50
Արմենակ Մկրտիչեան 50

Աբրահամ Շաքար 100
Անահիտ Մարգարեան 100
Մուրատ Արմուտլու 60
Սարգիս, Վերա Սարգիսեան 50
Յարութ, Նորա Արզարեան 50
Տ. եւ Տ. Գէորդ Քէօսէեան 50
Տօքթ., Տիկ. Ժան Առաքելեան 100
Տ. եւ Տ. Յակոբ Մանճիկեան 50
Պերճ, Նայիրի Զազրճեան 30
Լուսին Շաքար 100
Յակոբ Զույճեան 100
Վարանդ Բարախեան 100
Հերմինէ Գալանեան 30
Հիլտա Եալմեան 20
Տ. եւ Տ. Յակոբ Տէր Ուաշատուրեան 50
Կարօ, Հայկո Նահապետեան 100
Հերման Էրտողմուշ 100
Նազարէթ Սահակեան 40
Տ. եւ Տ. Դրօ Փիլիկեան 100
Նայիրի Համբարձումեան 50
Ռուրէն Քարակէօզեան 100
Մարի Գաֆէսճեան 100
Տօքթ., Տիկ. Ռուրէն Պետրոսեան 50
Վահագ, Մարալ Յովսէփեան 30
Ֆրդրան, Մարգրիտ Մելքոնեան 50
Տ. եւ Տ. Սարգիս Զուրիկեան 30
Արփի Մարկորեան 100
Պաժակ, Սոնիկ ձուրեան 50
Արթօ, Ալիս Մարգարեան 200
Ս. Յակոբ Վարժարանի ուսուցչական կազմ 30
Ժան, Յասմիկ ձիկունեան 50
Ատոմեան ընտանիք (Աստուրլախ) 100
Երուանդ, Նայիրի Շահինեան (Թորոնթօ) 50
Club Social de la Laurentienne 100

Ս. ԳԷՈՐԳ ԵԿԵՂԵՑԻՈՑ, ԼԱԽԱԼ ՈՐք. ՍԱՐԳԻՍ ԳԱԼԱՃԵԱՆԻ մահուան առթիւ,
Վոխան ծաղիկազաակի
Տիար Գէորդ Սալլաբեան 40
Հիլտա Սինանեան 20
Տ.Տ. Յովհաննէս, Սօսի Պէրպէրեան 30
Տ.Տ. ձօ, Մարալ Քէօյեան 20
Տ.Տ. Վարուժ, Նայիրի Գապագեան 25
Թաթարեան ընտանիք 10
ՈՐք. ՀԱՅՑ ԱՌԵՏԻՍԵԱՆԻ մահուան 40–ին առթիւ,
մահացած Հայէպ:
Տ.Տ. Աւետիս Աւետիսեան 100
Տ.Տ. ձորճ, Արինա Մուպալետ 100
Տիկ. Արաքսի Թօփճեան 100
Տ.Տ. Գրեգոր Թօփճեան 100
Տ.Տ. Շանթ Թօփճեան 100
Տ.Տ. Սննիկ Գազանճեան 100
Տիկ. Մարիա Գազանճեան 50
Տօքթ. Զարեհ Գազանճեան 50
Տ.Տ. Յակոբ Թէփիրճեան 40
Տ.Տ. ձորճ Թէփիրճեան 40
Տ.Տ. Արա Շատարեւեան 50
Տ.Տ. Բժ. Սէրօ Անտոնեան 70
Տիկ. Արսիւն Կոստանեան 20
Տ.Տ. Շահէ, Լինա Պիլէմճեան 20
Տիկ. Կարինէ Ղազարեան 20
Տ.Տ. Վարդան Գասապեան 20
Տիկ. Վերա Քիլիբեան 20
Տ.Տ. Սիմոն, Էյօ Յակորեան 25
Տ.Տ. Մանուէլ, Շաբէ Զարչաֆեան 30
Տիկ. Զուարթ Սարգիսեան 20

ՈՐք. ԳԷՈՐԳ ՖԵՍՏԷՔՃԵԱՆԻ մահուան 10–րդ տարելիցին առթիւ եւ Համայն
ՖԵՍՏԷՔՃԵԱՆ եւ ՅՈՎԱԿԻՄԵԱՆ ընտանիքներու ննջեցեալներու յիշատակին:
Տիկ. Անուշ Սարգիս 40
Սէթեան ընտանիք 20
Տ.Տ. Վարուժան Ֆըստըբճեան եւ զւկնք. 20
Տ.Տ. Սարգիս Ֆըստըբճեան 20
Տ.Տ. Մանիէլ Ֆըստըբճեան 20
Տիկ. Լուսին Ֆըստըբճեան 40
ՈՐք. ԱՏԷԼ ԶԷՐՔԷՋԵԱՆ–ՊԵՐԵՃԻՔ–ԵԱՆԻ մահուան 3–րդ տարելիցին առթիւ
եւ Համայն ԶԷՐՔԷՋԵԱՆ ընտանիքի ննջեցեալներու յիշատակին:
Տ.Տ. Սարգիս, Մարի Պերեճիբեան եւ Վարդգէս 20
Տ.Տ. Մեդուպ, Սիլվա Պերեճիբեան եւ Սարօ 30
Տ.Տ. Շահէ, Մահա Պերեճիբեան, Քարինա եւ Արիանա 20
Տիկ. Լուսին Պերեճիբեան եւ Արի 20
Տ.Տ. Շիրակ, Էլիզապէթ Պերեճիբեան 20
Տ.Տ. Պետրոս, Լիլիէթ Զէրբէզեան 30
ՈՐք. ԱԼԷՔՍԱՆ ԶԱՔԵԱՆԻ յիշատակին:
Շաբէ, Անի Զաբեան 40
Տ.Տ. Ռաֆֆի, Մարալ Զաքեան եւ զւկնք. 500
ՈՐք. ՂԵՌՈՂ–ՊԱՊՈՅԵԱՆԻ, ԱՆԺԷԼ ԿԱՐՈՑԵԱՆԻ եւ Համայն
ՊԱՊՈՑԵԱՆ եւ ԿԱՐՈՑԵԱՆ ընտանիքներու ննջեցեալներու յիշատակին:
Տ.Տ. Վրէժ, Սալրի Պապոյեան, Տ.Տ. Շանթ, Սալրի Պապոյեան, Տիար Վահան Պապոյեան, Օրդ. Դալար Ուաշատուրեան 60
ՈՐք. ԳՐԻԳՈՐ եւ ԲԷՐՆԱԹԻՆ ՓՈՇՈՑԵԱՆներու եւ
ՍԷՄԱ ԹԱԼԱԹԻՆԵԱՆԻ յիշատակին:
Շողիկ եւ Վարդիվառ Փոշոյեան 40
ՈՐք. ԱՇՈՒՆ ՊԱՍՄԱՃԵԱՆԻ մահուան 7–օրէքին առթիւ,
մահացած Լուս Անճէլոս:
Տ.Տ. Յակոբ Չիլինկիրեան 10
Սարգիս Չիլինկիրեան 10
Յարութիւն Չիլինկիրեան 10
ՈՐք. ՍԱՐԳԻՍ ԱԴԱՄԵԱՆԻ, ՍԱՐԴԻՍ ԶԱԳԱՐԵԱՆԻ, ՄԱՐԻՍՏԻՐՈՍ ՊԵՏՐՈՍԵԱՆԻ եւ Հաճան ԱԴԱՄԵԱՆ, ԶԱԳԱՐԵԱՆ եւ ՊԵՏՐՈՍԵԱՆ ընտանիքներու ննջեցեալներու յիշատակին:
Տ.Տ. Արամ, Վարդուհի Պետրոսեան

20
ՈՐք. ՎԻՍՈԼ ԱԹԱՆԷՍԵԱՆԻ մահուան 7–օրէքին առթիւ,
մահացած Հայաստան:
Տ.Տ. Հայկադ, Վիթթորիա Եագուպեան 30
Տ.Տ. Սարգիս, Լիլիթ Եագուպեան 20
ՈՐք. ՅԱԿՈԲ ԹԵՐԶԵԱՆԻ մահուան 2–րդ տարելիցին առթիւ:
Տ.Տ. Սիմոն, Էյօ Յակորեան, Սուրէն, Սթէֆանի եւ Սէրենա 25
ՈՐք. ՅԱԿՈԲ ՈՍԶԻԿԵԱՆԻ մահուան 7–օրէքին առթիւ:
Տ.Տ. Գրեգոր, Սիւզան Տէմիրճեան եւ զւկնք. 25
Տ.Տ. Հէնրի, Սիլվա Ուաշիկեան եւ զւկնք. 25
Տիկ. Աստղիկ Էսմէրեան 20
Տ.Տ. Յովհաննէս Տէմիրճեան 30
ՈՐք. ԳԷՈՐԳ, ՄԱՐԻ ԱԶԱՐԵԱՆԵՐու, ՊՕ



CONNU POUR LE MEILLEUR SOUVLAKI ET GYRO EN VILLE !



KNOWN FOR THE BEST SOUVLAKI & GYRO IN TOWN!



4491, boul. Samson, Chomedey, Laval • Tel: 450 681-3333

Dim. à mer. : 11h à 11h Sun. - Wed. 11am - 11pm
 Jeudi à sam. : 11h à minuit Thurs. - Sat. 11am - midnight



BARRY



KAREN



GARO

KAZANDJIAN



EXPERTISE

EXPÉRIENCE

EXCELLENCE

ÉQUIPE KAZANDJIAN.com

CLASSÉS PARMIS LES MEILLEURS COURTIER RE/MAX AU MONDE
RANKED AMONGST THE HIGHEST PERFORMING RE/MAX BROKERS IN THE WORLD

KAZANDJIAN REALTY.com

AGENCE IMMOBILIÈRE RE/MAX 3000 | 9280 L'ACADIE, MONTRÉAL, QC, H4N 3C5